

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԵՐԻՆԵՐ
ԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ Կ'ԸՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի հիւսիս - արեւելեան Նոյեմբերեանի շրջանի Բագրատաշէն ւանդի ուստիկանութիւնը անցեալ շաբաթ ձերբակալած է հայաստան ապերի մը. որ կեղծ անցագիրով Հայաստան մտած էր վրացի կ'նոջ մը հետ եւ «պտտած» մինչեւ Գիւմրիի շրջանները: Ստուգուած է որ ան կը կոչուի Ռաֆիք Պեքեւորլի Քերիմով:

Այս ձերբակալութիւնը կը հաստատէ այն կասկածները, թէ հայաստան ապերներ վերջերս Ղապանէն եւ Թաւուշէն (Նոյեմբերեանի արեւելքը) կը թափանցեն Հայաստան եւ յոռետուրիւն կ'ընեն:

ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Շարաթ, 15 Յունիսի կէսօրին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Հանրապետութեան նախագահի հրահչին, ներկայ գտնուեցաւ ի պատիւ քրիստոնեայ եւ իսլամ Հոգեւոր Պետերուն նախագահին տուած պաշտօնական ճաշկերոյթին, նախագահական պալատին մէջ: Երկու օրերէ ի վեր Պէյրութի Պրիմիէի պանդոկին մէջ տեղի կ'ունենայ քրիստոնեայ - իսլամ կարեւոր համագումար մը՝ Երուսաղէմի հայրերի շուրջ: Սոյն համագումարին կը մասնակցին Միջին Արեւելքի բոլոր քրիստոնեայ եւ իսլամ Հոգեւոր Պետերը, որոնց կարգին նաեւ Վեհափառ Հայրապետը, յատուկ պատուիրակութեամբ մը: Յիշեալ համագումարի բացման նիստին, ինչպէս ծանօթ է, խօսք առաւ նաեւ Վեհափառ Հայրապետը:

Պատգամայի մէջ, Վեհափառ Հայրապետը կարճ խորհրդակցութիւն մը ունեցաւ Հանրապետութեան նախագահին հետ եւ գլխաւորեալ պահեց Քալիֆորնիա իր կատարելիք այցելութեան մասին:

Յայտնենք, որ Անթիլիասի մէջ իրենց ունեցած հանդիպումէն ետք, Շնոտա Յ եւ Զաքար Ա. Պատրիարքները եւ Արամ Ա. Կաթողիկոս Ուրբաթ երեկոյան երկօրոյ հանդիպում մը ունեցան Պրիմիէի պանդոկին մէջ, ուր որոշուեցաւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն Հոգեւոր Պետերուն հանդիպում մը կայացնել Գահիրէի մէջ: Վերոյիշեալ համագումարին առթիւ, Շարաթ եւ կիրակի տեղի ունեցան պաշտօնական հիւրասիրութիւններ ու հաւաքներ:

8

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԿՆԵՑԱՒ ՓԱՐԻՋ ԵՒ ԱՊԱ ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ այս առաւօտ մեկնեցաւ Փարիզ: Փարիզի մէջ, երկու Վեհափառ Հայրապետները Ն. Ս. Օ. Տ. Գարեգիկ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ միասնաբար պիտի նախագահեն Հայաստանի մէջ քրիստոնեութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակի նշման Գործադիր Մարմնի ժողովին:

Ապա, Հիւզըբէրի, 20 Յունիսին, Վեհափառ Հայրապետը Փարիզէն պիտի մեկնի Լոս Անճելէս, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թմին տալ իր հովուապետական անդրանիկ այցելութիւնը: Վե-

8



MADE IN USA

Heat pump (reverse - Cycle system.)

Air flow control by the remote control.

Special for hot area.

LCD wireless remote control.

24 HR on/off dual setting timer.

850 \$ With Credit

Split System Aircondition

Sole Agent **AIRCOTPLUS**

Marash street, Said Orra building

Tel.: 01.264865 – 268160 Cel.: 03753340 Fax: 01.263344

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ (ԶԱԼՔԱ) «ՏԱՄԱՆ ՖՈՆՍԻԷՐ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ (ԱՌԱՔԵԼ ՄԻՆԱՍԵԱՆ - ՊԵՐՃԵԱՔ)

Իր յարգոյ յաճախորդներն ու բարեկամները կը հրաւիրէ երկուշաբթի 17 Յունիս 1996էն սկսեալ, այցելելու ՆՍՈՅԾ ՅԱՐԿԱԲԱԺԻՆԸ, որ աւարտած է Զալքայի իր կառուցած համալիրին մէջ, որ կը բաղկանայ 2 կամ 3 Գնջարանով յարկաբաժնեներէ:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԿԱՆԽԱՎՃԱՐ՝ 10.000 ՏՈԼԱՐԷՆ ՍԿՍԵԱԼ
ԱՄՍԱՎՃԱՐ՝ 445 ՏՈԼԱՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ԾԱԽՈՒ ԵՆ ԼԱԵՒ 2 ՄԹԵՐԱՆՈՅՆԵՐ 400 ԵՒ 800
ԸԱՌ. ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՄԲ, ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ՝ 5 ՄԵԹՐ
ՀԵՌ. 03-608074 ԵՒ 03-885018

ԱԶԵՐԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

ازتاک حیدرمتة سياسة وادعة. اليومة السؤلة. إئتادرویشکآن

1000 Լ.Ո. 71ԴԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 83 (19383) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 17 ՅՈՒՆԻՍ 1996 10ԷՋ

ԸՐԻՍԹԱՅԻՐ ԻՍՐԱՅԷ՝ ԴՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ՆԵԹԱՆԻԱՇՈՒ ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԻ «ՇՈՂԻ ՓՈԽԱՐԷՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ»Ը

Կ'ԸՆԵՆ ԴԱՄԱՍԿՈՍ

ՀՀ հաստատուած: ՍՈՒՐԻԱ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ

Սուրիա Շարաթ օր կոչ ուղղեց Միացեալ Նահանգներուն, որպէսզի ճշդուժ բանեցնեն Խորաշէյի ծաղրայեղական վարչապետ Նեթանիաշուի վրայ, որպէսզի ան ընդունի արաբական գրաւեալ Հոդերը վերադարձնելու ծրագիրը: «Սաուրա» պաշտօնաթերթը կը գրէ, որ Գահիրէի գերաստիճանը պիտի վերահաստատէ արաբական յանձնառութիւնը խաղաղութեան հանդէպ, բայց պիտի չեղտէ, որ Խորաշէյի հետ կապերը պիտի չընա՛կանունան, մինչեւ որ անկախ խաղաղութիւն չհաստատէ ըրորդ արաբներուն հետ:

Իսկ երէկ, Սուրիա կոչ ուղղեց Խորաշէյի վարչապետ Պենիաշին Նեթանիաշուի, որպէսզի ընդունի «Հոդի փոխարէն իրաւապաշտեան» սկզբունքը, որովհետեւ Խորաշէյ չի կրողարակելու ունեցած է Նեթանիաշուի հետ, բայց գրաւուած կը պահէ արաբներուն ընտրութիւնը:

Խորաշէյի ընտրութիւններուն արդիւնքին յստակացումէն ետք, արաբական յայտարարի ոչ տեղի կը նկատեն, որ Գահիրէ զարձակ դարձած է արաբական գորաշարքի մայրաքաղաքը եւ քանի մը օրէն պիտի հիւրընկալէ արաբական գերաստիճանը:

ՍՈՒՊԱՐԱՔ Կ'ԱՇԽԱՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՐԸ

Խորաշէյի ընտրութիւններուն արդիւնքին յստակացումէն ետք, արաբական յայտարարի ոչ տեղի կը նկատեն, որ Գահիրէ զարձակ դարձած է արաբական գորաշարքի մայրաքաղաքը եւ քանի մը օրէն պիտի հիւրընկալէ արաբական գերաստիճանը:

Եգիպտացի կ'ըսեն, որ միայն նախագահ Մուպար-

8

ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ ՊԵՏԻԱՅԻ ՄԷՋ

ՆԱՊՈՒՍ. 16 (ՌԵՕԹԸՐ).- Արաբ մը իսրայէլացի ոստիկան մը սպաննեց եւ անոր կինը վիրաւորեց կիրակի օր, Այսրորդանանի մէկ գիւղին մօտ, յայտնեցին իսրայէլացի պաշտօնատարներ:

Հանրային ապահովութեան նախարար Մոշէ Եահալ յայտարարեց, որ ոստիկանը սպաննուեցաւ Պետիա գիւղին մէջ, Նապոլուի ճամբուն վրայ: Պաղեստինցի կինեալը ինքնաշարժ մը կրակ բացած է ոստիկանին եւ անոր ընտանիքին (կինն ու երեխան) վրայ եւ ապա՝ փախուստ տուած: Պաղեստինցի ականատես մը աւելցուց, որ ոստիկանը գնում կը կատարէր իսրայէլ մը, երբ սուրացող ինքնաշարժ մը փամփուշտներ արձակուեցան:

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԺՈՂՈՎԸ ԲԱՅՈՒԵՑԱԻ

Մօտաւորապէս երկու ամիս տեւած ընդմիջումէ ետք, Մոսկուայի մէջ անցեալ շաբաթավերջին բացուեցան Լեռնային Ղարաբաղի հայրերի շուրջ բանակցութիւնները, մասնակցութեամբ Հայաստանի, Ղարաբաղի, Ագրպէյ-ճանի եւ Միւսքի իմարակի ներկայացուցիչներուն: Այս ժողովները տեղի կ'ունենան Եւգենի Փրիմաքովի Կովկասեան շրջապտոյտին յոսին տակ:

Բանակցութիւնները պիտի շարունակուին մինչեւ Ուրբաթ: Օրակարգի վրայ են շարք մը առկախ հարցեր, ինչպէս՝ քաղաքական համաձայնագիրի նախագիծը, Շուշիի եւ Լաչինի ապագինման հարցերը, պատանդներուն եւ գերիներուն փոխանակման հարցը, Ղարաբաղի սահմաններուն եւ պրաւեալ հողամասերուն ճշգրտան հարցերը եւայլն:

«Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ + 30»Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ԽԱԶԱՏՐԵԱՆ ԼՐՏԵՍ ԿԸ ՆԿԱՏԷ ԱՇՈՏ ԱՒԵՏԻՍԵԱՆԸ

«Վահան Յովհաննիսեան» 30-ի դատավարութեան անցեալ շաբաթավերջին նիստին, վկայութիւն տուած է Սաշա իմաչատրեան: Ան իր խօսքը սկսած է յայտարարելով, որ եթէ զինք գնդակահարեն իսկ, ինքզինք մեղաւոր չի գգար: Ան ընդհանրապէս ժխտական վկայութիւն տուած է Աշոտ Աւետիսեանի մասին, ըսելով, որ անկէ իր կրած տպաւորութեամբ կրնայ ըսել, թէ ան ազնիւ չէ եւ յոյսեր է: Ան պատմած է թէ Ա. Աւետիսեան գիրենք խաղաղապետ է թուող սկաւառակներու եւ յագեցեալին գէնքերու ծրագիրներով, Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի ազատագրման նպատակով: Ան այդ նպատակով տղաք արձանագրած է իր կացմէնք կազմակերպութեան համար, որ, յամենայնդէպ, յեղաշրջումի համար չէր:

ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակի նշման նախապատրաստական աշխատանքներուն ծիրին մէջ, Փարիզի մէջ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցաւ գիտաժողով մը, մասնակցութեամբ հայ եւ օտար հայագէտ շուրջ 40 գիտնականներու, մօտաւորապէսներուն եւ կրօնական հարցերու մասնագէտներու: Ժողովին ներկայ էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.: Գիտաժողովը վերջ գտաւ երէկ,

պատարագով: Լիրանանի այս խորհրդաժողովին կը մասնակցէր Ազգ. Կեդր. Վարչութեան ատենապետ մեթր իմաչիկ Պապիկեան, որուն հետ Շարաթ երեկոյ հեռաձայնային հաղորդակցութեան մը ճամբով իմացանք ժողովին կարգ մը մանրամասնութիւնները: Երկօրեայ ժողովին ներկայացուած եւ քննարկուած են 5 նիւթեր, որոնք կը վերաբերին յորելեական հանդիսութեանց եւ յառաջիկայ ծրագիրներուն: Զեկուցարարներուն շարքին էին Պարամ Ութիկ, Տենիզ Փափազեան, Ժան Փիեռ Մահէ, Ռուպիկ Թոմսըն, Նիկա Կարսոյեան, Գեղամ Գլորգեան եւ Յովնան Պէրպլեան:

Այս շաբաթակիցը տեղի պիտի ունենայ 1700ամեակի վարիչ մարմինի ժողովը, ընդ նախագահութեամբ երկու ևաթոսի՝ ներուն:

THE CAPTAIN'S CHOICE

Սկզբնական CAPTAIN SCOTT Ուիսքին կը գաղտնի ըլլար, որովհետեւ կը պատրաստուի ամենէն ընտիր հատիկներէն եւ Սկզբնական մէջ երեք տարի կը պահուի կաղնիի փայտէ յատկապէս շնուած տակառներու մէջ: Դուք կրնաք սկզբնականայն այս ուիսքին համաձայն շատ յարմար սակերով:

Սկզբնական CAPTAIN SCOTT ՈՒՍԵՐԸ Լիբանան կը ներածուի փայտեայ յատուկ տակառներով եւ շիշերու մէջ կը լեցուի սկզբնականայն մասնագէտներու հսկողութեան տակ, յատուկ գործարանի մը մէջ: Դետեքստ, անոր որակը ընդմիշտ ապահովուած է:

CAPTAIN SCOTT Ուիսքին պերճանք մըն է, որ կը տարածուի ամբողջ աշխարհին վրայ:



ԵԼՅԻՆ ԵՒ ԶԻՈՒԿԱՆՈՎ ԳՐԵԹԷ ՀԱՒԱՍԱՐ

ՄՈՍԿՈՒԱ, 16 (ՌԵՕԹԸՐ).- Ռուսիոյ մէջ Կիրակի օր տեղի ունեցան նախագահական ընտրութիւններ, որոնց արդիւնքներուն հիման վրայ պիտի ճշդուի երկրին մէջ տնտեսական բարեկարգումներու ապագայ ընթացքը: Ըստ առաջին արդիւնքներուն, Ելյին եւ Զիւկանով գրեթէ համահասարակութիւնով քուէներ ապահոված են: Նախագահ Պորիս Ելյին, որ նախագահութեան 10 թեկնածուներէն մէկն է, ինքնավստահ կերպով մերժեց ընդունիլ, թէ պարտութեան պիտի մատնուի համայնաւար թեկնածու Կենատի Զիւկանովի կողմէ, մինչ այս վերջինը հաւաստեց, թէ ժողովուրդը իր կողքին կը կանգնի:

Մայրաքաղաք արեւելեան եւ Սիպերիոյ շրջաններու

10



ՃԱՇԱՐԱՆ ԷԼ ՄԱՅԱՍ

ՏՆԱՅԻՆ ԽՈՐԱՆՈՑԻ ԶԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԵԿԷՔ ՀԱՄԵՏՆԵԼՈՒ
ՄԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳՈՐՏ, ԹՈՉՈՒՆ
սու պէտքէկ, քրպպէ հալեպիէ...
ճաշացուցակ՝ ըստ նախասիրութեան
Փակ է Կիրակի օրերը:

124, Թրապո փողոց - Էշրեֆիէ
հեռ. 01/ 215046 - 03/ 295060
Կառատուըն ապահովուած

KEFRAYA
«Un terroir, une vigne, un vin».



Մարկանայն ուիսքին մը, որ 3 տարի պահուած է Սկզբնական մէջ:

ՆՇՄԱՐ ՍՊԱՍԵԼՈՎ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԶԻՆ ՈՐԳԵԳՐԱՆ ՏԱԼԻՔ ԱԶԳԱՆՇԱՆԻՆ

Կառավարական եւ պետական մէկէ աւելի անձ-նատուրութեանց հաստատումներուն համաձայն, կառավարութիւնը այս շաբաթ պիտի վճռէ ընտրական օրէնքին հարցը եւ նախագիծը պիտի յղէ խորհրդա-րան՝ առ ի վաւերացում:

Ընտրական օրէնքի նախագիծին պատրաստու-թիւնը պիտի ըլլայ յառաջիկայ ընտրութեանց առա-ջին գործնական ազդեցունքը, իսկ երկրորդ եւ վըն-նական ազդեցունքը պիտի տրուի խորհրդարանին կողմէ, որ մինչեւ Յունիսի վերջերը պիտի գումար-րէ օրէնքին վաւերացման նիստը:

Այլ խօսքով, լիբանցիք այսօր հազիւ 15 օր հետո եւնայն օրէն, երբ երեսփոխանական ընտրա-ւայայքարը պիտի բացուի պաշտօնապէս: Այնուհետեւ, անուր մօտաւորապէս 2.5 ամիս ժամանակ պիտի ունենան, տեսնելու համար, թէ ինչ ձեւ պիտի ստանայ ընտրաւայայքարը, ընտրական ինչ-պիսի դաշնակցութիւնները եւ անոնց հիմամբ ինչ-պիսի ցանկեր պիտի ներկայացունան իրենց, որպէս-զի իրենց ալ, իրենց կարգին, կատարեն իրենց ընտ-րութիւնը՝ իրենց բուն տան այս կամ այն ցանկին: Ծաբաբներ եւ ամիսներ տեւած խորհրդակցու-թիւններէ ետք, կը թուի, որ պետական եւ քաղաքա-կան պատասխանատուներուն միջեւ գոյացած է որոշ համախոհութիւն՝ ընտրութիւններու տարազին շուրջ, հակառակ անոր, որ առաջադրուած տարա-զը նաեւ ստեղծած է դժգոհութեան ձայն (ի վերջ-նայ, որքէ տարազ իրականական չէ, միշտ ալ դժգոհ-ներ կրնան ըլլալ համախոհական որքէ տարազէ): Համախոհական տարազը, ըստ ցարդ գոյացած տու-եալներուն, կ'ըսէ, թէ Լիբանոնի նահանգներէն չորսը (Պէյրութ, Հաքաւ, Հիւսիս եւ Պէքա) նկա-տի պիտի առնուին իրեն մէկական ընտրաշրջան, իսկ Լեւոնալիբանոնի նահանգը, (զոր առնուած 2 ընտրաշրջանի վերածելու գաղափարը հող շահած էր մինչեւ Յունիսի սկիզբները) պիտի բաժնուի 6 ընտրաշրջանի եւ իւրաքանչիւր գաւառ պիտի նկատու-ի մէկ ընտրաշրջան:

Ինչպէս Լիբանոնի բոլոր համայնքները, նոյն-պէս ալ հայ համայնքի գաւառները մօտեն կը հե-տեւին տարազին յստակացման քայլերուն, նկատի ունենալով որ հայ համայնքին վերապահուած աթոռները կը գտնուին տարբեր հիմունքով ընտ-րական դրութեանքը շրջաններու մէջ: Այսպէս, Պէյ-րութի 3 աթոռներուն պարագային, ընտրական ցան-կերը պիտի կազմուին մէկ ընտրաշրջանի դրու-թեամբ, այնպէս ինչպէս եղաւ նախորդ ընտրու-թիւններուն (1992ին): Լեւոնալիբանոնի պարագա-յին, հայկական մէկ աթոռը յայտնապէս նկատի պիտի առնուի հիւսիսային Մեքն գաւառին մէջ (անցեալ, ընտրութիւններուն, Լեւոնալիբանոնը նկատի առնուած էր մէկ ընտրաշրջան): Պէքաայի մէկ աթոռին հակառակը պիտի վճռուի Պէյրութի հետեւողութեամբ:

Հայ Կաթողիկէ եւ աւետարանական համայնք-ներու աթոռները (մէկական) եւս նկատի կ'առնը-լին Պէյրութի ընտրաշրջանին մէջ:

Արդ, կառավարութեան եւ խորհրդարանին տա-լիք ազդեցունքներէն ետք, ընտրաւայայքարի դաշտը պիտի բացուի բոլոր համայնքներուն ու քաղաքա-կան հոսանքներուն համար: Այդ ազդեցունքներէն ետք է որ պիտի յստականայ, թէ Պէյրութի եւ ալ շրջան-ներու մէջ որո՞նք պիտի կազմեն ընտրական ցան-կերը, ինչպիսի՞ դաշնակցութիւններ պիտի գոյա-նան եւ ո՞ր ցանկերը պիտի դառնան մրցակիցներ կամ դաշնակիցներ:

Առաջիմ, ամէնէն ուշագրաւը այն է, որ 1992ի ընտրութիւնները պոչքոթի ենթարկող բազմաթիւ խմբաւորութիւններ հրաժարած են պոչքոթի տրամադ-րութիւններէն եւ հետեւաբար, բոլոր տուեալները ցոյց տու տան, որ յառաջիկայ ընտրութիւնները պիտի ըլլան աւելի լայն ներկայացուցչութեամբ, ինչ որ նաեւ կը նշանակէ աւելի մեծ թիւով գիծերու վրայ մրցակցութեամբ:

Ս.

ԻՍԱՄ ԶԱՐԷՍ՝ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈ՞Ւ

Լիբանանի ծանօթ գործադիր Իսամ Ֆարէս երէկ անուղղակիորէն յայտարարեց յառաջիկայ երեսփոխա-նական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը՝ ձիար-ձակարանին մէջ տեղի ունեցած հանդիսութեան մը ըն-թացքին:

Հայերիսութեան սկիզբին տեղի ունեցաւ ձիարշաւ, որմէ յաղթական դուրս եկաւ Ֆարէսը ձին: «Քանի մը ամիս ետք, այլ դաշտի մը վրայ տեղի պիտի ունենայ այլ մրցում մը, որուն եւս պիտի մասնակցինք՝ միշտ նոյն սպանական ոգով», յայտարարեց Ֆարէս՝ յայտնա-պէս ակնարկութեան ընելով երեսփոխանական ընտրու-թիւններուն:

Ձիարձակարանի հանդիսութեան ներկայ եղան կեն-սորոտի նախարար Փիեռ Ֆարաօն, նախկին երեսփո-խան Միշլ Սասին եւ քաղաքական այլ անձնաւորու-թիւններ:

«ԱՄԼՄԼՄԼՄԻՆ ԳՕՏԻ»ԻՆ ՄԷՋ «Յ. Լ. ԲԱՆԱԿԸ» ՏՈՒՄԻ 1 ՍՊԱՆԵԱԼ

«Հարաւային Լիբանանի Բանակը» երէկ տուաւ մէկ սպանեալ, երբ դիմադրութեան ուժերը ռումբ մը պայ-թեցուցին անոր շրջուն մէկ ջոկատին ճամբուն վրայ: Գործողութիւնը տեղի ունեցաւ Քֆֆա Ֆալուսի շրջա-նին մէջ:

«Հրգպալլա» Պէյրութէն յայտարարեց, թէ ինք կը կանգնի գործողութեան ետին:

ԻՍԼԱՄԵՒ ԲՐԻՍՏԱՆՆԵԱՅ ԿՐՕՆԱՊԵՏՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՁՆԵՆ

ՎԵՐՋ ՏԱԼ ԻՍՐԱՅԷԼԻ ՈՃԻՐՆԵՐՈՒՆ

Պէյրութի «Պրիսթոյ» պանդոկին մէջ երկօրեայ ժողով մը գումարող արար, հայ, դրաւի, ասո-րի եւ այլ համայնքներէ իս-լամ եւ քրիստոնեայ կրօ-նական ղեկավարներ չեղ-տեցին, որ Իսրայէլ պէտք է վերջ տայ իր ոճիրներուն, Երուսաղէմի արարներուն, ինչպէս նաեւ իսլամական եւ քրիստոնեական սրբա-վարներուն դէմ:

Միջին Արեւելքի եկեղե-ցիներու խորհուրդին հրա-ւերով գումարող ժողո-վը մտաւախութիւն յայտ-նեց որ չըջանի խաղաղու-թեան համաձայնութիւն մը կրնայ պաղտատնայինե-րը գրկել անկախ պետու-թենէ մը, որուն մաղաքա-ղաքը պիտի ըլլայ Երուսա-ղէմը: Կրօնաւորները աւել-ցուցին, որ արարներու եւ սրբազան վայրերու դէմ Իսրայէլ ոճիրներ պիտի չգործէր, եթէ զօրակցու-թիւնը չունենար միջազգա-յին գորաւոր ուժերու եւ պետութիւններուն:

ՆԵՐԱՆԻԱՅՈՒ ԲԱՐԻՔ ԶԻ ԽՈՍԱՆԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ

Պէյրութեան դէտեր երէկ գլխի չծածկեցին իրենց մտահոգութիւնը ի յուր Իսրայէլի մէջ կառա-վարական նոր ընկերակ-ցութեան ճշդած կարգ մը սկզբունքներուն, որովհե-տեւ անոնցմէ մէկ քանին բարիք չեն խոստանար Լի-բանանի հարաւին:

Նեթանիաւի աշխարհա-ւանարար Քնեսէթին ներ-կայացնէ իր կառավարու-թեան կացութ: Անոր ճշդած սկզբունքներէն մէկը

կ'ըսէ, որ Իսրայէլ «սպառ-նալիքներուն վտանգէն գերծ պիտի պահէ Հիւսի-սային Իսրայէլը»:

Լիբանոնի գլխաւորու-թեամբ եւ կրօնական ու աշխարհեան կուսակցու-թեանց անդամակցու-թեամբ կազմուելիք կառա-վարութիւնը բարիք չի խոստանար նաեւ Սուրիոյ ու պաղեստինցիներուն: Այսպէս, Իսրայէլի նոր կա-ռավարութիւնը կը մերժէ Կոյաթի վրայ իսրայէլեան գերիշխանութեան ջնջու-մը, պաղեստինեան անկախ պետութեան դէմ է, իսկ Երուսաղէմը կը նկատէ իր միացեալ մայրաքաղաքը:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ԶԵՐՐԱԿԱԼԷ ԱՖՓԻ ՄԷԿ ԹՂԹԱԿԻՑԸ

Իսրայէլեան ոստիկա-նութիւնը երէկ յայտնեց, որ Հարաւի «սահմանային գօտի»ին մէջ անցեալ Հինգշաբթի ձերբակալած է իրանեացի լրագրող մը՝ Ալի Տիա: Իսրայէլեան աղ-բիւրներ նախապէս չէին հաստատած լուրը:

Լրագրողը կ'աշխատու-ցի ֆրանսական լրատու գործակալութեան (Ա. Է. Ֆ. Փ.): Իսրայէլ գալիս կը մե-ղադրէ «Հրգպալլա» չեւտ գործակցելու յանցանքով:

ՔԱՆԱՅԻ ՉՈՂԵՐՈՒՆ ԹԻԸ՝ 103

Քանայի շարդից զոհերուն թիւը երէկ բարձրացաւ 103ի, երբ վերալորդ 70ամեայ լիբանցի մը մահա-ցաւ հիւսնաղանցիկ մէջ:

Ժողովի աւարտին հրա-ւարակուած հաղորդա-րութիւնը կը նշէ, որ Իս-րայէլ կը շարունակէ անի-րաւութիւն գործել Երու-սաղէմի արար ընակիչնե-րուն դէմ, անոնց հողերը

գրաւելով, պարսպներ բարձրացնելով, որպէսզի անոնք ազատօրէն քաղաք չմտնեն: Հաղորդագրու-թիւնը կ'աւելցնէ, որ այս սաղէմի արար ընակիչնե-րուն դէմ, անոնց հողերը

ՀԱՐԻՐԻ ԹՈՔԻՈՅԻ ՄԷՋ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ սկսաւ Ճափոն իր պաշտօնական այցելութեան, որուն ընթացքին, ան տե-սակցութիւն պիտի ունենայ ճափոնցի իր պաշտօնակի-ցին եւ ալ պատասխանատուներու հետ:

Լիբանանեան աղբիւրներ հաղորդեցին, որ Միջին Արե-ւելքի ընդհանուր կացութեան կողքին, խորհրդակցու-թիւնները գլխաւորաբար պիտի կեդրոնանան Լիբանա-նի համար խորհրդատու յատուկ մարմինի կազմութեան եւ անոր աշխատանքներուն վրայ: Ծանօթ է, որ ապրիլ-եան գլխաղբիւրի համաձայնութեամբ, պիտի ստեղծուի յատուկ մարմին մը, գրադելու համար Լիբանանի վերա-շինութեան ծրագրութեան եւ անոնց համար գումարներ հայթայթելու աշխատանքով:

Հարիրի ճափոնցի պատասխանատուներուն հետ պի-տի քննարկէ Ճափոնի մասնակցութեան տարողութիւնը ալ յանձնախումբին:

Նշենք, որ վարչապետի Զինաստան այցելութեան վեր-ջին հանգրուանը եղած էր Շանկհայ քաղաքը: Հարիրի տեսակցութիւն ունեցաւ Շանկհայի նահանգապետին հետ, ինչպէս նաեւ այցելեց շարք մը գործարաններ:

ՎԱՏԻԿԱՆԷՆ, ՎԵՐԱԴՊՐՁԻՆ

4 + 6 ԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՐԴԱՐ

ԿԸ ՆԿԱՏԷ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐԲԸ

Վատիկան մէկ շարաթ տեւած իր այցելութեան աւար-տին, մարոնիներու պատրիարք կարտինալ Սֆէյր երէկ վերադարձաւ Պէյրութ: Օղակայանին մէջ պատրիար-քին դիմաւորեցին նախարարներ Սթեֆան Տուէյճի եւ Միշլէ Էտտէ, ինչպէս նաեւ համայնքային պատասխա-նատուներ:

Կարտինալ Սֆէյր Վատիկանի մէջ մասնակցեցաւ Լի-բանանի համար եկեղեցական յատուկ յայտարարութեան բանաձեւումի աշխատանքներուն: Պատրիարքը հաղոր-դեց, որ հիմնական կէտերուն մէջ՝ յայտարարութիւնը պիտի վերահաստատէ Լիբանանի համար Սինոտի ծա-նոթ որոշումները, որոնք օրին արժանացած էին լիբա-նանեան կարգ մը կազմերու քննադատութեան:

Սֆէյր պատրիարքը հանդիպում ունեցաւ Յովհան-նէս Պօղոս Բ. Պապին հետ: Քննարկելով լիբանանեան ներքին հարցեր: Ան մանրամասնութիւններ չհաղորդեց հանդիպումին մասին եւ բաւականացաւ ըսելով, որ Պա-պը մօտէն կը հետեւի Լիբանանի ցարգացումներուն:

Վատիկանի մէջ պատրիարքին այցելեց նաեւ նախկին նախագահ Ամին Ժումայէլ եւ պատրիարքին փոխանցեց իր, զօր: Միշլէ Աունի եւ Ազատական կուսակցութեան ղեկավար Տորի Շամունի միջեւ տեղի ունեցած հանդի-պումին աղբիւրները: Պատրիարքը ըսաւ, որ հանդի-պումը անցած է փոխադարձ հասկացողութեան միջո-յոտի մէջ:

Հարցապնդուելով ընտրական օրէնքին մասին, կար-տինալ Սֆէյր խուսափեցաւ յստակ կեցութեամբ արտա-յայտել: Ան ըսաւ, որ յառաջիկայ օրերուն ամէն բան աւելի պարզ պիտի դառնայ: Ան դիտել տուաւ, սակայն, որ 4 նահանգ՝ Ս. Ս. գաւառ ընտրական դրութիւնը մտահո-գութիւն կը ստեղծէ թագմաթիւ լիբանանցիներու, որովհե-տեւ այդ դրութիւնը անհաւասարակութեան եւ անարդարութիւն կ'ենթադրէ:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ԵՒ ԽԱՏՏԱՍ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԺՈՍՊԼԱԹԸ

Գաղթականներու հարցերու նախարար Ուալիտ Ժոմպաթ երէկ այցելեց Դամասկոս եւ ընդունուեցաւ Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի կողմէ: Խորհրդակ-ցութիւնը կեդրոնացաւ շրջանային եւ լիբանանեան ներ-քին շարք մը հարցերու վրայ:

Ժոմպաթ տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ խատտամի հետ:

Կը նախատեսուի, որ յառաջիկայ քանի մը օրերուն, Դամասկոս այցելէ նաեւ խորհրդարանի նախագահ Նե-պիհ Պրորի, նախագահ Ասատի հետ հանդիպում ունե-նալու համար:

ՍՈՒՐԻՈՅ ՄԻԺԳԹԻՆ ՊԸՐՐԻԻ ՄՕՏ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրորի երէկ ընդ ու-նեց այցելութիւնը Սուրիոյ հանրապետութեան միւլթիլի շէյխ Աճմէտ Քաֆթարոյի, որ Պէյրութ կը գտնուէր՝ մասնակցելու համար Երուսաղէմի մասին իսլամ - քրիս-տոնեայ «Պրիսթոյ»ի համագումարին:

Պրորի եւ Սուրիոյ միւլթիլին խորհրդակցեցան երկ-կողմ յարաբերութիւնները յուզող շարք մը հարցերու շուրջ: Անոնք չեղարկեցին արաբական աշխարհի միասնա-կանութեան անհրաժեշտութիւնը՝ Գահիրէի արաբական գերաստիճանի նախօրեակին եւ անկէ ետք, դիտել տա-լով, որ միայն այդ ճամբով կարելի է հասնիլ արդար եւ ամբողջական խաղաղութեան՝ Միջին Արեւելքի մէջ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

ՎԷՃԻ ՀՐԱՒԷՐ

Ամերիկացիք եւ իսրայէլացիք կը փորձեն խափանել արաբական գերաստիճանի առաքելութիւնը: Կ'ենթադրու-ի, որ արաբ վեհապետները պիտի քննարկեն իրենց դիմաց կանգնող հաւանական մարտահրաւէրները, իս-րայէլեան ընտրութիւններէն ետք:

Արարներուն արտօնուած չէ, որ գէթ իսրայէլեան այս կորսուած ժամանակի ընթացքին (եթէ ճիշդ է այս արտայայտութիւնը) փորձեն վերստին համերաշխու-թիւն, հասկացողութիւն, գործակցութիւն ու միակա-մութեան միջոցորտ ստեղծել: Հետեւաբար, Ուալիլի-թրին նախանձախնդիր է ամէնօրեայ հերթականութեամբ արարներէն պահանջելու, որ իսրայէլեան աշխարհեան ծայրայեղական իշխանութեան բաւարար աւելթ տան, նախքան որեւէ որոշումի կամ կեցութեամբ որդեկրումը:

Հակառակ անոր, որ Նեթանիաւի «կրակ»էն ցարդ միայն «Հրգպալլա»ի եւ հարաւցիներու ուղղուած ազ-դարարութիւններ ու ծուխեր եկան, այսուհանդերձ, Ուորըն Քրիսթաֆֆոր չի վարանիր մեզ հրաւիրելու այն-պիսի կեցութեանքներու, որ կարծէք անձրեւի տակ կը քայլեք եւ ոչ թէ հրաբխային հողի վրայ ենք:

Խորքին մէջ, չենք գիտեր թէ ինչո՞ւ բոլոր արար պետութիւնները պիտի չհամարձակին որեւէ քայլի դի-մելու, սպասելով, որ կարգուի, որ դարձելու ետք իր դահլիճը, որուն տուր իր խօսքը ըսէ, զգամելէ ետք իր դահլիճը, որուն համար յարձակողական ու ծայրայեղական խորհրդա-նիշներով ծանօթ անձնաւորութիւններ կը մրցին իրա-րու դէմ:

Նաեւ՝ չենք գիտեր թէ ինչո՞ւ էի գումարուելի գերաս-տիճանը, նոյնիսկ եթէ Իսրայէլի իշխանութիւնը ստանձ-նէ իսլամականներու թեկնածուն:

Հաւանաբար աւելի նպատակաշարժար էր կամ անհր-րաժեշտ էր գանազանել Նեթանիաւի ընտրութեան եւ գերաստիճանի կայացման միջեւ: Աւելին, ցաւալի կամ ամօթ է, որ Թէյ Աւիւի իշխանութիւնը Նեթանիաւի ձեռք անցնիլը ըլլալ միակ պատրուակը արար վեհա-պետներու հանդիպումը արդարացնելու, կարծէք մեր կացութիւնը Շիմոն Փերէսի օրով աւելի լաւ էր:

Անկախ արարներու յայտնէն հակամարտութեան եւ խաղաղութեան հարցէն, արաբական գերաստիճաննե-րը միշտ ալ մեկնակէտ եղած էին արար ժողովուրդնե-րու յոյսերուն՝ միջ-արաբական համերաշխութեան, գոր-ծակցութեան ու հասկացողութեան գծով, որ անպայ-ման իր դրական ազդեցութիւնն ու արժանազանը պիտի գտնէր բոլորին մօտ: Սակայն այս գերաստիճանները վերածուեցան կրկնուող յուսահարութեանց ու ցնցում-ներու: Անոնք ձախողեցան տարիներու ընթացքին ստեղ-ծել ակնկալուած նուազագոյն համերաշխութիւնը:

Թէեւ յառաջիկայ գերաստիճանը կը թուի ըլլալ վեր-ջին առիթի գերաստիճանը, սակայն ցարդ յստակ չէ թէ անկախ նախորդներէն լաւ պիտի ըլլայ, ոչ թէ միջ-արաբական տարակարծութեանց ու բաժանումներուն պատճառով միայն, այլեւ՝ աշխատեցիք ծրագրելի պատկերացումի չգոյութեան պատճառով: Արդարեւ,

գերաստիճանի թուականէն շարաթ մը առաջ, տակաւին դիտակալն խորքով ոչ մէկ տեսութիւն կամ պատկերա-ցում կայ յառաջիկայ հաւանականութեանց իրապաշտ պատկերացումին մասին:

Զենք խորհրդ, որ այս գերաստիճանը պիտի կարենայ ճառախօսութիւններէն ու նկարներէն անդին անցնիլ:

Ընդհանրապէս գերաստիճաններու ընթացքին, դե-կալարներին ու վեհապետները կու գան ամրապնդելու եւ վաւերացնելու նախապէս գոյացուած հասկացողու-թիւնները: Արդ, արդեօք որեւէ որոշում կամ համա-ձայնութիւն գոյութիւն ունի, որ վաւերացուի այս գե-րաստիճանին: Յարգ նման բան չկալ ու այս ընթացքով, Գահիրէի գերաստիճանին վիճակուած է ըլլալ քաղաքա-կան ճառախօսութեանց ամպիրոն մը, ուր որդէ աւելի, վիճելու առիթները բաց են:

ՌԱԺԷԼ ԽՈՒՐԻ

(Քաղուածաբար՝ «ՆԱՀԱՐ»էն)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՊԱՐԻՒԼԻՍԻՆ մէջ, երէկ ռումբ մը պայթեց

Ուրբաթ 14 Յունիսին, Անթիլիասի Մայրավանքին մէջ իր տեսակին մէջ եղակի հանդիպում մը տեղի ունեցաւ Զրպտի եկեղեցւոյ Հոգեւոր պետ Շնորհա Գ. պատրարքին, Ասորի եկեղեցւոյ Հոգեւոր պետ եւ Անտիոքի պատրարք Զաքար Բ. Խուսքի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետին միջեւ։

Ներկայ էին Լիբանանի առաջնորդական տեղապահ Գեղամ մրդ. Խաչերեան, միաբան հայրեր, քահանայ հայրեր, ազգ. կեդրոնական պարզութեան փոխատենապետ Արա Երեւանեան եւ ատենադպիր Յովակ Թոխիկյ։

Մայր, Տաճարին մէջ տեղի ունեցաւ կարճ աղօթք՝
 Հայերէն, զրպատելին եւ անորիւն լեզուներով: Ապա
 երեք հոգեւոր պետերը բարձրացան վեհարան:
 Վեհարանի ղահիճին մէջ վեհահաճո ձայնապետը
 ջըմը խօսքերով ողջունեց երկու պատրիարքներուն ներ-
 քակութիւնը Անթիլիասի մէջ: «Քրիստոնէական ջըմը
 սիրով կ'ողջունեմ ձեզ Մեծի, Տանն Կիլիկիոյ Կաթողիկո-
 սութեան աջ կեդրոնին մէջ՝ ոչ իբրեւ հիւրեր այլ՝ իրեւ

նորայիններ», լուսավեճափառու, եւ ապա աւելցուց «Մենք երեւոյնգետուր պետերս նորայիններ ենք, որովհետեւ Աստուծո՛ւ մեզ կանչած է ծառայելու երեք եկեղեցիներուն», դպտիտ, ասորի եւ հայ, որոնք քրիստոնէկութեան պատմութեան առաջին դարերէն սկսեալ պահած են իրենց միութիւնը՝ դաւանական, աստուածաբանական ու ծիսական գետնի վրայ: Հակառակ բազմաթիւ գովառութիւններուն ու փորձութիւններուն, մեր եկեղեցիները

իրենց միութիւնը գործնապէս արտայայտած են դառնալով Քրիստոսի Աւետարանին հաւատաւոր քարոզիչները կողմասի եւ Միջին Արեւելքի մէջ, Եւ ա՜ն այսօր մենք ուրախութեամբ ու արդար հպարտութեամբ աշխարհին կը ներկայանանք իրեւ եկեղեցական մէկ ընտանիք»։ Ծարունակելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Մենք եղբայրներ ենք, որովհետեւ մենք գիրար կը ճանչնանք աւելի քան քսանհինգ տարիներէ ի վեր։ Մենք յաճախակի առիթներով միասին եղանք միջեկեղեցական շարժումին մէջ, միջազգային թէ՛ չրջանային մակարդակներու վրայ։ Միասին աղօթեցինք, միասին մտածեցինք ու միասին գործեցինք ի խնդիր քրիստոնէական եկեղեցու միութեան եւ արեւելեան ուղղափառ քոյր եկեղեցիներու միութեան առաւելամրաւապիտան»։ Վեհափառ Հայրապետը իր խօսքը եզրակացուց ըսելով. «Այսօրուան աշխարհը այն է՛լ ինչ որ էր երէկ Հսկայ փոփոխութիւններ տեղի ունեցան եւ կ'ունենան մեր չուրջը։ Մեր եկեղեցիները չեն կրնար անտարբեր մնալ ներկայ ընկերութեան կանաքին մէջ տեղի ունեցող փոփոխութիւններուն, ներկայ աշխարհը յուզող հիմնահարցերուն եւ մեր ժողովուրդներու կեանքը ալեկոծող մտահոգութիւններուն դիմաց։ Եւ աւելին»։

Մենք չենք կրնար անտարբեր մնալ Միջին Արեւելքը տապալկեցնող հարցերուն նկատմամբ։ Մեր եկեղեցիները իրենց խոր արմատները ունին արարական աշխարհին մէջ Երջանէն ներս մենք օտարներ չենք, եկուորներ չենք Դարեր շարունակ ապրած ենք այստեղ. մեր արիւնը տեղեղծադործութիւնը, տաղանայներն ու երազները շաղկապած ենք Միջին Արեւելքի պատմութեան, մշակոյթներուն, հողին ու ժողովուրդներուն հետ։ Հետեւեալ Միջին Արեւելքի հարցերը ու տաղանայները մերն են միաժամանակ։ Ու ա՜ն այժմ ժողովուրդ մենք պէտք ենք արունակենք գործը միասնաբար՝ իրեւ քոյր եկեղեցիներ։ Մենք պէտք է աւելի ամուր հիմքու վրայ չընենք գոյութեանական երկխօսութիւնը իսլամ մեր եղբայրներուն հետ։ Մենք պէտք է վերահաստատենք մեր ամրոյցական յանձնառութիւնը չրջանէն ներս ամրողջա

կան, մնալուն ու արդար խաղաղութեան վերահաստատման, որ կարելի է միայն արտաքան գրաւեայ հողերու վերադարձով իրենց իրաւատիրոջ: Մենք պէտք է միասնաբար վերածրօգրենք մեր քրիստոնէիկան վկայութիւնը, աւետարանչութիւնը ու ծառայութիւնը մեր ժողովուրդներուն: Ահա այս հաւատքով, տեսիլքով ու վերանորոգ թափով միասնաբար գործելու յանձնառութեամբ մի ողորմած ձեռներկայութիւնը Անթիլիասի Մայրապատէրին մէջ»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1. Աւելի քան երբեք արեւելեան ուղղափառ եկեղեցիները նկատանքը, որուն մաս կը կազմեն ղըպտի, ասորի, հայ եւ Եթովպիոյ եկեղեցիները, պէտք է գործնապէս արտայայտէ իր հաւատքի միութիւնը սերտ գործառնութեան, միացեալ լախածնունդի կենտրոն եւ ալ ազդու միջոցներով:

3. Միջին Արեւելքի պատմութեան, հողին ու մշակոյթին մէջ խոր արմատներ նետած մեր եկեղեցիները չեն կրկար անտարբեր մնալ Միջին Արեւելքը յուզող հիմնական հարցերուն նկատմամբ: Մենք կը վերահաստատենք մեր ամբողջական զօրակցութիւնը արաբական արդար դատին եւ շրջանին ներսմնաշուն ու ամբողջական խաղաղութեան վերահաստատման, որ կ'իրագործուի միայն արաբական բոլոր հողերու վերադարձով իրենց իրաւատիրոջ: Մենք կը վերահաստատենք մեր ամուր կապաւածութիւնը երուսաղեմի սուրբ քաղաքին, ուր քրիստոնէութեան, ինչպէս նաեւ մեր երեք եկեղեցիներուն իրաւունքները պէտք է պահպանուին:

5. Շրջանեն ներս բոլոր եկեղեցիներուն միջեւ գործակցութիւնը ու միասնականութեան ամրապնդումը իր նկատեմել իրիտ անհրաժեշտ, յատկապէս՝ Միջին Արեւելքի պատմութեան այս վնասկան հանգրուանին: Շրջանի եկեղեցիները քրիստոնէական միութեան գործնական արտայայտութեան լաւագոյն օրինակը պետք է հանդիսանան: Միջին Արեւելքի եկեղեցիները խորհուրդը շրջանային այն միակ միջեկեղեցական կառույցն է, որուն համբոյ կարելի է գործակցութեան նոր դաշտեր որոնել ու միասնականութեան գործնական քայլեր առնել:

ԵՆՈՏԱ Պ. ՊԱՏԻԱՐԲ ԱԳԵՔԱՆԳԻՈՅ
ԶԱՔԱ Ա. ԻՈՒՐԱՋ ՊԱՏԻԱՐԲ ԱՆՏԻՈՒԲ
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆԵ
ԿԻԼԿԻՈՅ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԷՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՎԱԻԵՐԱՑՈՒԵՑԱԻ

ከኮሀሀ	ሀወሐተቶሄረ
ኒሀኑበጊበዙፎዙኑ	ኒሀሀሀተበጊ
ደበዙሶዙ	ጓሀጊበሶሃ
ዮበጊበዙፎሄረ ጉኑሀ	ሀ

Երեւանի ջրամատակարարման հարցը լուրջ տազմայաներ ստեղծած է քաղաքին մէջ: Յատկապէս ոռոգման ջուրի գոյութիւնը մեծ աղմուկ բարձրագուցած է:

խառանքային խորհրդ-
դակցությունը մը ունենա-
լով՝ լրջորեն քննեց իշե-
նալ պարագան եւ քաղա-
քապետարանի տարած-
քային կառավարման բա-
ժիններուն լանճնարար-
ութեալ խտացնել ջրա-
գողությունը հսկողությու-
նը:

աճանես մայրաքաղա-
հի նախակրթարաններու
վերանորոգման աշխա-
տանքները եւ պահանջ
դրուեցաւ վերստիսիլ զա-
նոնք՝ ամսվերջի բնու-
թիւններէն ետք:

Տարիներու անդու-
բիրը անգամ մը եւս յարգե-
ւեցաւ Կիրակի, 9 Յունիս
1996ի կէսօր, եւմ, Պէյրութ-
ի ամերիկեան համալսա-
րանի «Կրին Ֆիլմ» մարզա-
դաշտին վրայ:

Հայկական պարաօլտմեր (պարաօլտյէ) Հուրի Գալպեյեանը շատ ծավալաւորեցաւ իր յատկանշական եւ ինքնուրոյն պարերով, արժանաւոր թուրքիէ շերմ ծափերու: Նշեմ, որ իսլ Լեւոն Բոլեքի պարաօլտմերը եւս մասնակցեցաւ այս փառատօնին, առդանցքին ցուցայինով արցախեան տարազներ:

Հաշվառման համակարգի միջոցով համակարգիչի միջոցով հաշվառման, ներքին ջարդերի, Զրաչեն, Սի
լիկեան գիւղերն ու Նուրարաչեն քաղա
քը:

ԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ի Նիս քաղաքին մեջ իր աշխատանք-
եց սփիւռքահայ վարժարաններու հա-

յովի փակման պատճառով արար-
մանակ Փարիզի մօտ Հայաստանի դես-
պիտեհեան սխիւքանալ վարժարան-
ստոյովի աշխատանքները զնահատեց
դուրիւն եւ ցանկութիւն յալտեց, որ
վարժարաններու համատեղովը վե-
նդուրեան:

Հայաստանի «Սինդիկատ - 96» քառերակույն փա-
նակցելու համար Հայաստան հրախորհրդա-
ղերտի Վ. Փափագեան անունի բառերա-
կոմբինատը Զորիշչարթի, 5 Շուկիսկի, երես-
րորենան» քառերակույն մէջ ներկայաց

Ն ՊԱՐԵՐՈՒ
ԱՆԱԴԵՍ

«Գրարկել,օգ-
նատուրիւնը
սմայսարանի
սոււամ յիշեալ
«Գրարկել,օգնաւ»ի պարա-
խումբը՝ Նոստրոյնով, ապա-
Հայ Աւետ. Բոլեւի խումբը
Լ.Ղ.Հ.ի դրօշով:

յգես, որ մաս-
նախօն միքսու
տուրքեր ամե-
սաբարանի պա-
ռուն ամսիշա-
ղի գրաւած էր՝

Լենալ Չորեքշաբթի, 19 Յունիս 1996,
ժամը 9.30ին, Էդրեֆիեի Ազատամարտ

ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՏԷ ՕՇԱԿԱՆ՝ ԱՐՅԱԽԵԱՆ ԻՐ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վահէ Օշական Պէյրութ էր 2 ամիս առաջ։ Ան շաբաթասկիւբին Պէյրութ վերադարձաւ, Արցախ եւ Հայաստան իւրախառուկ «ուխ-տագնացութեան» մը ետք։ «Պարտք կը նկատեմ ինծի կարելի միջոց-ներով մասնակցիլ Արցախի պալ-քարին», կ'ըսէր ան Արցախ իր ու-ղեւորութեան հետ։ Ան կամա-ւոր կերպով գնաց Ստեփանա-կերտ, դասախօսեց համալսարա-նին մէջ, ահագին բան փոխանցեց եւ... ահագին բան տրվեցաւ իր։ Պէյրութ վերադարձին օրը, Վ. Օշական այցելեց «Ալդախ» իւրմ-բագրատունը։ Կարճ ժամանակա-միջոցի մը մէջ սեղմ, ամփոփ, բայց գրեթէ համապարփակ վրոյց մը ու-նեցանք իրեն հետ, գրողի, դասա-խօսի եւ հայրենիքին ու Արցախին իւրախատուկ բայց օրինակելի իր ծառայութեան մասին։ Ստորեւ՝ մեր վրոյցը, նոյնպէս սեղմ տողե-րու մէջ։

ՀԱՐՑՈՒՄ.— Որքա՞ն մնացի՞ք Արցախ, որքա՞ն Հայաստան։

Վ.— ՕՇԱԿԱՆ.— Արցախ մնացի 5 շա-րաթ, Հայաստան 9 օր։

Հ.— Արցախի մէջ՝ ընդհանրապէս Ստե-փանակի՞ք, քէ առիթ ունեցա՞ք այցելելու նաեւ այլ շրջաններ։

Վ.— Գիտէ՞ք որ Ստեփանակերտ գա-ցած էի դասախօսելու։ Այդ աշխատան-քը տեղի ունեցաւ շաբաթի 4 օր, օրական 3 ժամ տեւողութեամբ։ Մնացեալ ժամա-նակը առիթ տուաւ ինծի այցելելու Շու-շի, Հատրուկ, Գանձասար, Աղտամ, Մար-տակերտ եւ այլ գիւղեր, որոնց շարքին՝ մեծ թաղար՝ Շուշիի հարաւ, հսկայա-կան բարձունքի մը վրայ։ Ֆետայիներու հետ, որոնց շարքին էր հռչակաւոր Ապա-րանցի Պաւլիկը, այցելեցինք նաեւ յառա-ջագահ զիրքերը, ուր ազերիական ուժե-րու գիծերը հագիւ 100 մեթր հեռու էին։ Գիտէ՞ք, գինադու է։ Կարելի էր զիրք զիրք ծայն տալ անոնց...

Հ.— Ի՞նչ նկարներ դասախօսեցի՞ք Ստե-փանակիքի մէջ։

Վ.— Գլխաւորաբար 2 նիւթ, արեւմտա-տաճայ գրականութիւն եւ անգլիական արդի գրականութիւն։ Շէշափիրէն մին-չեւ մեր օրերը։

Հ.— Ինչպէ՞ս ընկալուեցաւ ձեր այս նա-խածնութիւնը։

Վ.— Պէտք է ըսել, որ ուսանողները շատ մեծ ուշադրութեամբ եւ հետաքրք-րութեամբ հետեւեցան դասախօսու-թեանց։ Առաջին օրերուն, ունէինք լեզ-ւի դժուարութիւն, բայց երբ ամփոփ հար-թեցինք, մնացեալ ընթացաւ հեզասա-ռ։ Արեւմտաւայ գրականութեան ուսա-նողներուն ծանօթութիւնը շատ սահմա-նափակ է, բոլորիս ծանօթ պատմաւե-րով։ Յետոյ, չունին կարգին գրողարան, գիրք, մամուլի հաւաքածոներ։ Իրենց հա-մար, ընդհանուր աւամբը նոր կայուած է փոխանցած։

Հ.— Ուրեմն, որոշ դժուարութիւններ դի-մագրուեցի՞ք...

Վ.— Բնականաբար։ Դժուարութիւնը 2 տեսակի էր։ Նիւթին իրենց քիչ ծանօ-թութիւնը, նաեւ դասախօսութեան հին դրութեան մթնոլորտը։ Իմ նպատակս էր, նիւթին ծանօթացման կողքին, ուսանող-ներուն մէջ մշակել քննական միտք, որով-հետեւ իրենց մօտ աւելի տիրակալն էր դա-սախօսին կողմէ տայր եւ ուսանողին կող-մէ առնելը, այսինքն՝ մէկ ուղղութեամբ շարժում։

Հ.— Ի՞նչ վիճակ ունի Ստեփանակերտի համալսարանը ներկայիս, ուսանողներու թիւի, դասախօսներու թիւի, քիչ քանակ-մունքներու խմբաւոր։

Վ.— Նախ ըսեմ, որ կը գործեն գրե-թէ անկարելի պայմաններու մէջ, նիւ-թագլխի սահմանափակ միջոց-ներով։

Ուսանողներուն թիւը կը հասնի չուրջ 2200-ի, դասախօսներուն թիւը՝ կ'անցնի 160-ը։ Անոնցմէ վեցը ուղտոր-փրփրեմէն օր-ներ են, 80-ը՝ գիտութեանց թեկնածուներ, իսկ մնացեալը՝ աւագ դասախօսներ։

Համալսարանը հիմնուած է 1992-ին, հնչածան ծրագիրով։ Ունի 3 գլխաւոր բաժանմունք։

ա) Մարդկային գիտութեանց։ Այս բա-ժանմունքը մէջ կ'աւանդուին լեզուներ (Հայոց լեզու, գրականութիւն, մանկա-վարժութիւն, ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն), նաեւ ռազ-մական-գիտութեան գիտելիքներ։

բ) Տնտեսագիտութեան բաժանմունքը ունի ճարտարագիտութեան, գիւղատն-տեսութեան ու քննականաբար տնտեսա-գիտութեան դասընթացներ։

գ) Գիտութեանց բաժանմունքին մէջ կ'ընթանան ունին քննագիտութիւն, կեն-սաբանութիւն, աշխարհագրութիւն եւ

բժշկական գիտելիքներ։

Համալսարանը յառաջիկայ տարի պի-տի տայ իր առաջին հունձքը։ Ուսանողներուն մեծ մասը, տրամա-բանականօրէն, աղջիկներ են։

Հ.— Համալսարանաւարտ ի՞նչ մակար-դակի վկայականի կ'արժանանայ։

Վ.— Մեր հասկացողութեամբ՝ պսա-կաւորի տիպոսին։ Այնուհետեւ, ան կ'ը-նայ երթալ Երեւան, աւելի բարձր ուս-ման տիրանալու համար։ Ըսեմ նաեւ, որ շատեր չեն ամբողջացնել համալսարա-նական ուսման ծրագիրը։ Ուսանողները մեծ մասամբ հետաքրքրուած են ուսուց-չական ասպարէզով։

Հ.— Ըսի՞ք, որ դժուարին պայմաններու մէջ կը գործէ համալսարանը...

Վ.— Օ.— Այո, կ'ուզեմ չեղտել այս կէտը։ Համալսարանի տնօրէնը՝ Լեւոն Նալիկո-պոսեան, աշխոյժ մարդ է։ Ան իր անձնա-կազմին հետ կ'աշխույժ կ'ընէ, որպէսզի նիւ-



Ապարանցի Պաւլիկը

թական չափագանց սահմանափակ միջոց-ներով կարելի ըլլալ յառաջունոր տալ ու-սանողին, անշուշտ որքան որ կարելի է այդ պայմաններուն մէջ։ Չափազանցած չեմ ըլլար եթէ ըսեմ, որ կարիքը ունիւ աւելն բանի, գրեականներէ մինչեւ տար-րալուծարանային մասնագիտական սար-քեր եւայլն։ Օրինակ մը տալու համար ըսեմ, որ թուղթը հագուողիւտ եւ արժէ-քաւոր բան է Ղարաբաղի մէջ...



Վ. Օշական ուսանողներու հետ

Երբ պիտի վերադառնայի, տնօրէնին հետ մեր վերջին մէկ գրոյցին հարց տուի, թէ արդեօք ինչ բանի անմիջական կարի-ք ունին։ Շուտով պատրաստեցանք մը, որուն վրայ կան իսկապէս անմիջական կարիքներու շարք մը։ Արագ ակնարկ մը նետեցի եւ մօտաւոր գնահատումով՝ կէս միլիոն տոլար արժէքով բաներ են։ Իսկ ատիկա ոչինչ է։

Հ.— Այդ պայմաններուն մէջ ինչպէ՞ս կը գործէ համալսարանը։

Վ.— Զորաշք կը հաւատա՞ք։ Հրաշք տեղի կ'ունենայ հոն։ Հակառակ բոլոր դժուարութեանց, ժաշկ կամք ունին եւ իրենց նպատակներուն իրագործման հա-մար ոչ մէկ խոչընդոտի առջեւ կանգ առ-նելու տրամադիր են։ Եւ այս՝ ոչ միայն համալսարանական գործի մակարդակին վրայ... Իսկապէս որ սքանչելի ժողովուրդ են զարարացիք։

Հ.— Բացի ուսանողներէն, առիթ ունե-ցա՞ք շփուելու ժողովուրդին հետ։

Վ.— Այո, շրջապատուած ընթացքին եւ այլապէս։ Հիւրանսէր եւ հաղորդական մարդիկ են։ Թէեւ ամէն տուն տուգի պատ-ճառ մը ունի, բայց ատիկա չ'ազդեր իրենց կեանքին ու աշխարհահայեացքին վրայ։ Մեծ համարում ունին սփիւռքահայու

ՀԱԿԱԿՇԻՈՒՆԵՐ

Հայաստանում կայանալիք նախագահական ընտ-րութիւնների նախաշմին աղաջացած հիմնական խըն-դիրը հետեւեալն էր. արդեօ՞ք, ինչպէս հնում, մենք կ'ընտրենք «անձը», թէ թեկնածուների կողմից առա-ջարկուած գաղափարները, ծրագրերը, համագային հզօրացման ինքնու յստակ համադրութիւնները։ Արդեօք մենք մեր ձայնը կը տանք նրան, «ով մեզ աւելի շատ դո՞ւր է գալիս», թէ մէկ ուրիշին, որը կ'առաջարկի հիմնաւորուած, իրատեսական ծրագիր։ Այս առումով աւելի հրատապ է դառնում ոչ միայն քաղաքական ուժերի կողմից իրենց ծրագրային դրոյթների մշա-կումը, այլեւ ներկայ ժամանակաշրջանում տարբեր կուսակցութիւնների դիրքորոշումների համադրման փորձը՝ ընդհանուր «փաթեթորմ» մշակելու նպատա-կով։

Այս տարուայ Յունուարի 15-ին ԳլխաՔՄին, Հ. Դ. Կ. հրապարակեցին համագործակցութեան սկզբունքները, ըստ որոնց, պէտք է աշխատանքներ տարուէին Հայաստանի քաղաքականութեան եւ տնտեսութեան առանձին ուղղութիւնների վերաբերեալ հեռակարա-յին ծրագրեր մշակելու նպատակով։ Այդ խնդիրը լու-ծելու համար ստեղծուեցին միջկուսակցական երեք պետական շինարարութեան եւ իրաւական վերափոխ-ման, արտաքին քաղաքականութեան եւ ազգային հար-ցերի, ինչպէս նաեւ ընկերային-տնտեսական քաղա-քականութեան յանձնախմբեր։ Սկզբնական փուլում յանձնախմբերի աշխատանքին մասնակցեցին Ա. ժ. Մ. Երկրակցացուցիչները։ Ներկայ պահին յանձնախմբերի փաստաթղթերն ուսումնասիրում է նաեւ Հ. Յ. Դաշ-նակցութիւնը։

Չփորձելով եզրակացութիւններ անել, կը ցանկա-նայինք որոշ նկատառումներ յայտնել այն վերջնա-կան արդիւնքներից առաջ, որոնք ստացուեցին պետա-կան շինարարութեան յանձնախմբի աշխատանքում, որին մասնակից է նաեւ այս յօդուածի հեղինակը։ Հարկ է նշել, որ յանձնախմբի թեզերը հաւաքու-թեան են արժանացել ԳլխաՔՄի եւ ՀԻԿի կողմից։

Գրեթէ բոլոր ընդգիմադիր ուժերը համաձայն են, որ պետական շինարարութեան այն հիմնադրոյթը, որն ընկած է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադ-րութեան հիմքում, չի ապահովում իշխանութեան ճիւ-ղերի հակակշիռը եւ հաւասարութեան զարգացումը իրական ժողովրդավարական հանապառօնով, այլ տա-նում է դեպի քողարկուած մենատիրական կառավա-րում։ Սակայն տեսանելի չէ այլընտրանքը. Հայաստա-նի համար ո՞րն է ընդունելի պետական կառուցուած-քի այն նմուշը, որը կը լուծի բոլոր հիմնահարցերը։ Արդեօ՞ք այդ հիմնահարցերը լուծուած էին աւելի վաղ մշակուած Սահմանադրութեան այլընտրանքա-յին նախագծերում։ Հնարաւոր է, արդեօք, բանաձե-ւել միջկուսակցական ընդհանրացուած մօտեցում պե-տական շինարարութեան խնդրի վերաբերեալ. որո՞նք

են աշխուհի վիճակից հսկայապետութեան համար առա-ջն նպատաւաւոր ղեկավարման ձեւի անցման հաճա-կարհները։ Սրանք էին այն հիմնահարցերը, որոնք ընկած էին միջկուսակցական յանձնախմբի աշխատան-քի հիմքում։

Առաջին իսկ նիստերում պարզուեց, որ արդի Հա-յաստանի համար զուտ խորհրդարանական վարչաձե-ւը անընդունելի է այնպէս. ինչպէս անընդունելի է զուտ նախագահական կառավարումը, որն իրական սպառնալիք է իշխանութեան գերեզմանացման հա-մար։ Յանձնախմբի աշխատանքի ելակետային հիմ-նական դրույթն էր «վերահսկող իշխանութեան հա-մակարգը» իշխանութեան ճիւղերի հակակշիռների իրական ապահովմամբ։ Ընդ որում, հակակշիռը պէտք է լինի այնպիսին, որ իրականացումը կախուած չլինի որոշակի անձանցից։ Այսինքն նույնիսկ «ամենավատ» նախագիւր կամ վարչապետը պէտք է առաքյալն օրէն գուրկ լինի իրական իշխանութիւնը «բռնազաւթելու» հնարաւորութիւնից։

Եզրակացրեցինք, որ նախագահի անձը, այնուամե-նայնիւ, անհրաժեշտ է, ի հարկէ, զգալիօրէն փոքր լիազօրութիւններով։ Երկրան իշխանութեան (նախա-գահը եւ խորհրդարանը) երկու բեւեռների առարկա-յութիւնը ապահովում է նախ եւ առաջ համակարգի մեծ հկուութիւն արտաքին փոփոխութիւններին անդ-րադրածելու դէպքում եւ երկրում կանխում է բեւեռ-ներից մէկի լիակատար անվերահսկելիութիւնը։ Այս-տեղից հետեւում է երկրորդ նախապայմանը նախագա-հը պէտք է լինի համաժողովրդական ընտրեալ, այլա-պէս չի կարող խաղալ երկրորդ բեւեռի եւ անկախու-թեան երաշխանորի դերը։ Ինչպիսիք լիազօրութիւն-ների պէտք է ունենայ եւ ինչպիսիսն ըր պէտք է ունե-նայ նախագահը, ըստ վերոյիշեալ պահանջների։

Անպայմանօրէն այդպիսիք պէտք է լինեն առ աշ-ուր առկայ ներկայացուցչական գործառնութիւնը, մի-ջազգային պայմանագրերի եւ խորհրդարանի որոշում-ների վաւերացման իրաւունքը, դիւանագիտական ներ-կայացուցիչների եւ կառավարութեան ղեկավարի առաջարկով բարձրագոյն հրամանատարական կազմի նշանակումները։ Հիւրաբորութիւնների նուազեցումը, հաւաքին հերթին, վերաբերում է ն կառավարութեան ձեւաւորման եւ նրա գործունեութեան ղեկավարման հարցերին։ Նախագահը պէտք է միայն առաջարկի վար-չապետի թեկնածութիւնը խորհրդարանի հաստատմա-նը, ընդամենի հաշուի առնելով խորհրդարանական հիմ-նական ուժերի յարաբերակցութիւնը, որոնք իրենց հեր-թին պէտք է ձեւաւորուեն արհեստավարժ եւ բազմա-կուսակցական ընտրաձեւով։ Խորհրդարանի կողմից հաստատուած վարչապետը ներկայացնում է խորհրդ-դարանի քննարկմանը կառավարութեան կազմը, կա-ռուցուածքը եւ ծրագիրը։ Այսպիսով, իշխանութեան իրական լծակները կենտրոնացուում են վարչապետի ձեռքին, որը հաշուետու է խորհրդարանին, այլ՝ ոչ նախագահին։

Ընդգիմութիւնն ունի մէկ այլ տեսակետ եւս՝ Հա-յաստանին անհրաժեշտ է զուտ խորհրդարանական վարչաձեւ, քանի որ ընտրեալ նախագահը կարող է նորից «բռնազաւթել» իշխանութիւնը, եւ «համաշխար-

հային» փորձը անսխալ թէ ապացուցում է, որ խորհրդա-րանական վարչաձեւն ընտրած զարգացող երկրները աւելի շուտ են հասնում իրական ժողովրդավարու-թեան։ Նախ ինչպէս Հայաստանի, այնպէս էլ նախկին Խորհրդային Միութեան երկրների համար հազիւ թէ կիրառելի է միջազգային փորձը (որը հիմնականում վերաբերում է լատինաամերիկեան եւ ափրիկեան երկրների փորձին)։ Ինչ վերաբերում է «բռնազաւթ-մանը», ապա վերոյիշեալ վարչաձեւում նախագահը ամենեւին չունի որեւէ լծակ, որպէսզի կարողանայ ինչ որ բան «բռնազաւթել»։ Եթէ կան կասկածներ, ապա լիազօրութիւնների ցանկը կարելի է էլ աւելի կրճատել, բայց ունենալով բացասական փորձ, չարժե մի ծայրայեղութիւնից անցնել միւսին։ Օրինակ, վար-չապետի անձի ծայրաստիճան հզօրացումը կը լինի նույնպիսի ծայրայեղութիւն։ Քննենք հետեւեալ լիա-վիակը. կուսակցութիւններից մէկը կամ կուսակցու-թիւնների որեւէ միութիւն կազմում է խորհրդարա-նական մեծամասնութիւն։ Բնականաբար նախագահը ստիպուած է առաջարկել իբրեւ վարչապետ այդ կու-սակցութեան ղեկավարին։ Այդ ժամանակ վարչապե-տը դառնում է ամենազօր անձ, քանի որ խորհրդարա-նի վերահսկողութիւնը պէտք է բաւականաչափ պայմանական, եւ մենք կարող ենք ունենալ մենատի-րութեան մէկ այլ՝ «վարչապետախորհրդարանական» ձեւ։

Նման ծայրայեղ իրավիճակում քաղաքական իշ-խանութեան երկրորդ բեւեռը՝ ընտրեալ նախագահը հնարաւորութիւն կ'ունենայ շտկել դրութիւնը։ Մաս-նաւորապէս խօսքը վերաբերում է խորհրդարանը ար-ձակելու իրաւունքին։ Սակայն այդ իրաւունքը պէտք է իրագործել օրէնքով սահմանուած որոշակի դէպքե-րում, վնդի իրաւասութիւնը պէտք է հաստատի Սահ-մանադրական դատարանը։ Մնում է եւս մէկ մանրա-մասն՝ Սահմանադրական դատարանը պէտք է լինի իսկապէս անկախ, եթէ նրա կազմը ձեւաւորում է նա-խագահը եւ խորհրդարանը, ապա այն չի կարող կա-տարել դատաւորի իր դերը։ Մեր կարծիքով, էլքը մէկն է՝ Սահմանադրական դատարանը պէտք է լինի ընտրու-վի մարմին. ինչը նրան կը դարձնի ոչ միայն անկախ, այլեւ՝ օրինական, թոյլ կը տալ կատարել իշխանու-թեան ճիւղերի հակակշիռի գործառնոյթ անցումային փուլում, երբ քաղաքացիական հասարակութեան տար-րերը երկրում սաղմնային վիճակում են։ Խօսելով ուղ-ղակի ընտրութիւնների մասին, հարկ է նշել, որ ժո-ղովրդավարութիւնը եւ հակակշիռութիւնը՝ իշխա-նութեան համակարգում կը լինի ոչ լիակատար, եթէ մարդպետները չլինեն ընտրելի անձեր։ Աւելի է. ըստ յանձնախմբի եզրակացութիւնների, առաջարկում է ստեղծել 20 - 30 մարդուց բաղկացած վարչապետի խոր-հուրդներ եւ նշում է նաեւ նրանց աշխատանքային որոնք ապահովում են տեղական մակարդակներին իսկութեան համակարգի խեղաթելումների բացա-րումը։

Ընթերցողը կարող է հարց տալ. «Կարելի է յօրինել որքան հնարաւոր է լաւ համակարգ, բայց ինչպէս իրագործել այն փաստացի գործող Սահմանադրութեան պայմաններում»։ Խնդրի լուծումը դեռեւս մշակման փուլում է, բայց արդէն կարելի է ասել, որ հիմնական միջանկիւր կը լինի սահմանադրութեամբ նախատես-ւած իրաւական ուղի՝ հանրաքուէի միջոցով ուղղում-ներ մտցնելու կամ նոր Սահմանադրութիւն ընդունե-լու վերաբերեալ։ Իսկ հանրաքուէի միակ իրական նա-խապայմանը կարող են լինել իսկապէս առարկայա-կան եւ ազատ նախագահական ընտրութիւնները։

ԱՆԵԶՍՆԵՐԻ ԱՎԱՄՍԼԵԱՆ

«Գոյուս Արմենի»


3

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ
ԿԱՐԵՒՈՐ
ՀԱՆԳԻՊՈՒՄ...

Կեղեցական շարժումն ենք եւ նորոնտիր Կաթողիկոս Նեքի Տանի Կիլիկիոյ։ Ինչպէս դուք ըսիք, մենք միաս-նաբար գործելուք մեր քոյր եկեղեցիներու ու բրիտան-նական միութեան համար եւ պիտի շարունակենք ինչ-րնթացքը։ Խօսելով Հայ, Ղրպտի եւ Ասորի եկեղեցիներ-ու փոխարարութեանց մասին՝ ան ըսաւ. «Անկա-կած որ մենք մէկ եկեղեցի ենք, նոյն հաւատքը, նոյն ստուածաբանութիւնը, նոյն ծէս ունինք։ Մենք մի-ասնաբար վկայած ենք Քրիստոսի Ա. Աւետարանը, մենք միասնաբար տառապած ենք ու նահատակուած։ Մենք հապումով դիտած ենք Հայ Եկեղեցւոյ ու ժողովուրդին յառաջընթաց կեանքը, հակառակ քանդումներուն ու ջարդերուն։ Այսօր, ծայնակցելով Արամ Կաթողիկոսին, մենք եւս կը յայտարարենք, որ պիտի շարունակենք միասնաբար գործել թէ՛ Միջին Արեւելքն ենք եւ թէ՛ դուրս»։

Պատշաճական խօսքերու փոխանակումն ենք երեք հոգեւոր պետերու առանձնացան խորհրդակցութեան մը համար։ Շուրջ կէս ժամ տեւող խորհրդակցութեան ըն-թացքին 3 հոգեւոր պետերը պատրաստեցին միացեալ յայտարարութիւնը։ Յիշեալ յայտարարութիւնը արա-բերէն եւ հայերէն լեզուներով կարդացուեցաւ Վենա-րանի դահլիճին մէջ։ Արարեւելքն ընդգրկող կարգաց Պէյ-րութի Ասորի Առաջնորդ Աթնապոս Աֆրամ, իսկ հա-յերէն ընդգրկող կարգաց Սեպուհ Մ. վարդապետ։ Ապա երեք հոգեւոր պետերը ստորագրեցին յիշեալ յայտարա-րութեան արարեւելքն եւ հայերէն ընդգրկող (յայտարա-րութիւնը կու տանք առանձնաբար)։

Աւելի քան երկու ժամ տեւող այս պատմական այցե-լուհեան աւարտին Շնոտա պատրիարքը յուշանուէր-ներ յանձնեց Արամ Կաթողիկոսին եւ Չաքքա պատ-րիարքին։



գրականություն եւ մշակույթ

ԺԱՄԱՆԱԿԵՆ ԵՏ ՄՆԱՅՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԵՆ ԱՌԱՋ ԱՆՅՆՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Կարծէք թէ հանճարները ժամանակէն առաջ կրծնին եւ «հարկադրաբար» կ'ապրին ապագայի մէջ: Իրենց ապրած ժամանակաշրջանին եւ իրենց շրջապատին կողմէ դժուար կ'ըմբռնուին (կամ ընաւ չեն ըմբռնուիր), սակայն ժամանակ մը ետք կրդառնան ժողովրդական եւ հանրաճանաչ դէմքեր:

Ներկայէն դուրս ստեղծագործող եւ ապագայի մէջ «բնակող» հանճարներն շատեր ոչ միայն չեն ընկալուած ու հասկըցուած, այլեւ յաճախ հալածուած են ու դատապարտուած՝ միանկութեան ու տառապանքի: Այս ուղղութեամբ օրինակները բազում են ու բազմազան:

Այդպէս էին Մոցարթը, Վանկոն ու Պայրընը: Այդպէս էին նաեւ խորենացիի ու Նարեկացիի:

Թէեւ մեր ոչած օրինակները անցեալին կր պատկանին, սակայն հարցը այժմէական է:

Ինչո՞ւ: Մէկ կողմէ, այսօր եւս գոյութիւն ունին արուեստագէտներ, որոնք իսկապէս օժտուած են ու կ'ապրին ու կր ստեղծագործեն ժամանակէն առաջ ու ապագայի համար եւ, միւս կողմէ, կան նաեւ այլ նուազ օժտուած (կամ միջակ կարողութեան տէր) արուեստագէտներ, որոնք նախ չեն կրնար ըմբռնել ու ընդունել ժամանակէն առաջ անցած իսկական տաղանդները եւ ապա չհասկցուած ըլլալու պիտակին տակ կր փորձեն ապրիլ ժամանակէն առաջ եւ կր ներկայանան իրրեւ գոհ: Այս վերջին խումբին «անդամները» բաւականին շատ են: Անոնք ոչ միայն իրենց ձախողութիւններուն համար արդարացումներ կ'որոնեն, այլեւ մտահոգի խոչընդոտներ կր ստեղծեն արժանաւորներուն դիմաց:

Գոյութիւն ունին նաեւ երիտասարդներու եւ սկսնակներու հարցը: Ասոնցմէ շատեր արագօրէն կր խանդավառուին նորութիւններով եւ իրենց կարողութիւններէն վերելքներով կ'ապահովեն ժամանակէն առաջ ապագայի ոլորտները չափել իրենց ինք-

նաւստահութիւնը հաստատելով խախտու հիմքերու վրայ: Ասոնք հակամէտ են նաեւ մերժողական կեցուածք ուղղելու անցեալի եւ ներկայի դասականացած արժէքներու նկատմամբ:

Սկսնակներէն շատեր իրենց մակարդակով թէեւ կ'ապրին անցեալի մէջ, սակայն կ'ուզեն շրջանցել ներկայի իրողութիւնները ու արագօրէն թեւակոխել ապագային մէջ: Նման պարագաներու հարցը կր դառնայ նուրբ եւ փոստագուր:

Կազմաւորման շրջանի մէջ գտնուող սակայն որոնումներու տենչով վառուած երիտասարդը մէկ կողմէ հարկաւոր է հեռու պահել ինքնախարէկութենէ, իսկ միւս կողմէ, սակայն, պէտք չէ կաշկանդել ու սանձել անոր հոգեկան թռիչքները:

Խորհրդային պայմաններու տակ կադապարուած ուղեղներով դաստառներ իրենց թելադրուած տեսութիւնները պարտադրելով ուսանողներուն՝ աւեր գործեցին սերունդներուն մէջ: Այս երեւոյթը յատուկ էջը միայն խորհրդայիններուն:

Գոյութիւն ունէր անոնցմէ առաջ, գոյութիւն ունի նաեւ այսօր (առաւել կամ նուազ չափով) թէ՛ նախկին խորհրդային եւ թէ՛ ամբողջ աշխարհի տարածքին: Տառապանքի տակ կան ժամանակէն եւս մնացած ուսուցիչներ, որոնք գիտակցաբար թէ անգիտակցաբար, ուղղակիօրէն թէ անուղղակիօրէն կ'արգելակեն եւ կր խանգարեն սկսնակներու ընդլայնուն ստեղծագործական ճանապարհը:

Բոլոր պարագաներուն, սակայն, արւեստի պատմութիւնը ցոյց տուած է, որ եթէ կան իսկական տաղանդներ, ապա անոնք տեղ մը եւ չափով մը կր դրսեւորին եւ ժամանակի ընթացքին արժեւորելով՝ կր դրուին իրենց արուեստին արժանի մնալուն պատմանդանի մը վրայ:

Նմանօրինակ տաղանդներ են Սեդրակ Ռաշադեանն ու Մինաս Աւետիսեանը, որոնց մասին կր խօսիլ քովի սիւնակներով տրուած վկայութիւնը:

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

● Ֆարայայի մէջ, գետնայարկ, պարտէզով միասին: Հեռ. 885789:

ԾԱԽՈՒ Է

● Էշնեֆիէի մէջ տուն մը, 3 խանութով: Հեռ. 328526 եւ 324178:

ԾԱԽՈՒ ՇԱԼԷ

● Սաբէլթէի մէջ, Ֆէշքրուն, 145 քառ. մետր, «Նեփթիւ» պողոտէի մէջ, կահաւորած, գին 65.000\$։ Դիմել՝ հեռ. 414893, 414994, իսկ երեկոյեան՝ 411241:

Կ՝ՈՒԶՈՒԻ

● Ծամբողական ընկերութեան մը համար փորձառու պաշտօնէայ մը: Հեռ. 448979:

ՎԱՐԶՈՒ Է

● Կիսովի կահաւորութեան յարկաւորութիւն մը, 2 ճշտակեցեակ, 2 քաղնիք, լսման կահաւորութեան խոհանոց եւ ծեցնաթղթեր: Հասցէ.- Տրպայա, Եդիշէ Մառնուեան դպրոցից կից: Հեռ. (09) 916402 եւ (03) 348134:

ԾԱԽՈՒ Է ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ ՄԸ

● Պորճ Համուտի մէջ, Արաքս թաղ, 5 յարկանի: Հեռ. 261473:

Կ՝ՈՒԶՈՒԻ

● Գանձող օրիորդ մը, HAWIE ճաշարանին համար (Տորա, Մար Եռուէֆ հիւանդանոցի մօտ): Ֆերանդեթէ գիտնալը պայման: Աշխատանքի ժամեր՝ առաւօտեան ժամը 9էն մինչեւ 6: Հեռ. 332425 եւ 202318, կէսօրէ առաջ ժամը 9էն 12:

«ԻՆՉ ԼԱԻ ՕՐ...»

Տարբեր սերունդներու պատկանող եւ տարբեր դպրոցներու հետեւող գեղանկարիչներն են Սեդրակ Ռաշադեանն ու Մինաս Աւետիսեանը: Սակայն երկուքն ալ տառապած ու հալածուած են իշխանութիւններէն եւ, յատկապէս, միջակութիւններէն...: Ստորեւ տրուած վկայութիւնը, որ քաղուած է «Ծիրակ» հրատարակչատունէն լոյս տեսած «Իմ Մինասը» գիրքէն, խօսուց է եւ ուսանելի:



Նմոյշ մը Սեդրակ Ռաշադեանի գործերէն:

Այդ վարձուներ որ վերադարձան կը լինէր ցանկացած նկարչի համար, բաւական մեծ ազմուկ հանկը, ինչը եւ մահին դրել էր այդ «մեարք»: Նս չեմ կարծում, թէ նա այնքան վառ էր գլուխ հանում կերպարոնստից, որ կարողանար նիշը գնահատել Մինասի աշխատանքի արժանիքները: Դա՛նկայնեղեղ արուեստարան էր, հայ կերպարոնստի վերաբերակ մի բանի գրեթէ եղիմակ: Բնաւորութեամբ էլ կարծես կարուկ չէր եւ միւս նկարիչների նկատմամբ այդպիսի ագրեսիւութիւն չէր ցուցաբերում: Նրա վարձունէր հասցեագրուած էր յատկապէս Մինասին եւ պոպուլիստական նկատակներ էր հետապնդում: Իբր «սուս, թէ մենք ինչ... համարձակ ենք... անգիշում... ինչ արեւածարհանով ենք վերաբերում գանգաւ «գորսպրձուկներին»... «հանգստոր իւնը խոռվողներին» նկատմամբ...»:

Կարծում եմ, այստեղ պէտք է խոստովանել, որ իմ արուեստարան ընկերներից մէկը կարգաւոր իմ յուշերի այս դրուագի ձեռագիրը, չհամաձայնեց այդ վարձունէրի վերը բերուած իմ գնահատականին եւ սկսեց «պաշտպանել» նրա կերպին: «Դու սխալում ես, նա շատ վառ էր հասկանում արուեստից եւ այդ բանի արել է «անկեղծ» ըլնա՝ գեղանկարչութեան մասին իր ունեցած պատկերացումների համաձայն եւ ոչ թէ պոպուլիստական մտադրութիւններով»:

Երբ Մինասի հետ խօսելիս ես յիշեցի այդ միջպղպղ, նա ասաց՝

– Բանի տեղ մի դիր: Դիտեմ որ արդէն մի շարք է միայն այդ մասին եւ բամբասում... Բայց մի ուրիշ բան էլ գիտեմ: Ահա ցուցահանդէս է բացուել: Խո՛ւ եւ խօսում արտիներում ու կուլուարներում: Դեղծի (Աշոտ Յովհաննիսեանի – եւ, Զ.) նկարի մասին, Մարայիցի (Պետրոսեանի – եւ, Զ.) նկարի մասին, իմ նկարի եւ նրա ճակի մասին: Կարելի է կարծել, թէ դա ցուցահանդէսի գլխաւոր նմոյշն է:

– Բայց արուեստարանի համար... դա չէ՞ որ կենդանութեան ոչ բաղաճակիբը ձեւ է եւ...:

– Դու նրանից շատ բան ես պահանջում... Իսկ առհասարակ, ի՞նչ ես կարծում, արուեստարանի համար լա՞ւ է, երբ նրա ռաբի մասին անելի շատ են խօսում, քան նրա յօդւածների... Պրիմադո՞ւնեւ է, ի՞նչ է...:

Թէեւ Մինասն արտահայտւած առիւններում էր գլխաւորում իր արուեստի նկատմամբ նման վարձունէրներից բայց կարելի է պատկերացնել, թէ ինչ ապրումներ է ունեցել: Ինչ վերադարձն է կրել... ԶԼ՞ որ նա ինքը գիտէր իր արժէքը:

Վերադառնամ՝ Ս. Ռաշադեանի ցուցահանդէսի բացման օրուայ դէպքերին: Միայն ընտրող յանձնաժողովի վերը շարադրուած դրուագի լոյսի տակ կարելի է հասկանալ թէ ինչու՞ Մինասի հոգու համար նկեց այդպիսի սպեղանի դարձան Սերի կենցիկի խօսքերը, որ հնչեցին Արմէնի շուրթերից: Այն ժամանակ Մինասի համար շատ կարեւոր էր, որ Սերը, որի մասին շատ բարձր էր գնահատել իր գեղանկարչի, անձամբ ծանօթ չլինելով Մինասի հետ եւ չիմանալով վերջինիս վերաբերմունքն իր արուեստին, նշել է իր անունը Հայաստանի ամենաարժանաւոր մի բանի նկարիչների կողմին:

Ինչ լաւ օր էր դա Մինասի համար:

ԵԱԿՈՎ ԶԱՐԳԱՐԵԱՆ



Լ.Օ.ԽԱԶԻ
«ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԶԵԻԿ

ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 18 Յունիս 1996, առաւօտեան ժամը 9.30ին, Աղբայեան ակումբին մէջ:

Անդամակնիներուն ներկայութիւնը փափաքելի է:

ՎԱԶՈՒԹԻԻՆ



ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ԶԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՅԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

Կը ներկայացնէ՝ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Գեղարուեստական դեկավարութեամբ՝
ԵՐՈՒԱՆԻ ԵՐԿԱՆԵԱՆԻ

Երեքշաբթի, 18 Յունիս 1996, երեկոյեան ժամը 8.30ին, Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի «Էսեմպլի Շոլ»/ին մէջ:

ՍՈՒՏՔԸ ԱԶՍՏ

SPONSORED BY GAS
(G. AYANIAN & SONS.)



Մանկավարտեղի եւ նախակրթարանի շրջանաւարտներուն կամ տարեդարձի եւ այլ առիթներով անփոխարինելի նուէր մը
«ԱՇԱԿԵՐՏԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ» շարքին
«ԱՄԱՍՄԱՅ ԾՐԵՐ» միացեալ հատորը
(որ կ'ընդգրկէ 17 գործընկեր)
Դիմել՝ «ԱՇԱԿԵՐՏԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ» գրատունը
կամ հեռաձայնել 264485 թիւին:

ՎԵՐԱԳԱՐՁ՝ ՍՏՈՐԶՐԵԱՅ ԱՆԳԵՆԱԿԱՆԷՆ

ԳԱՐԵՐԷ Ի ՎԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԵՕԹԸ ՀՐԱՇԱԽՔՆԵՐԷՆ ՄԷԿԸ ԱՂԵՔԱՆԳՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ ԿՈՐՄՈՒԱԾ ԷՐ: ԱՅՅՄ ԱՆԻԿԱ ՍՓԻՆԲՍՆԵՐՈՒ ԵՒ ՓԱՐԱԻՈՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀ ԿՈՒ ԳԱՅ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԶՈՒՐԵՐԷՆ

Աղեքսանդրիան հնագիտական տեսակետներ աշխարհի հրաշալիքներից մեկն է, որ կ'ըստի, թե նույնիսկ անոր հողը պատմական երեւոյթ ունի, եւ թե անոր քաղաքացիները օրհնեալ պէտք է ըլլան, որովհետեւ իրենց ոտքերուն տակ սփռուած են հնադարեան հրաշալիքներ: Սակայն նույնիսկ աղեքսանդրիացիք զարմացան, երբ անցեալ Հոկտեմբերին տեսան, թէ ի՞նչ դուրս եկաւ իրենց հաւահանգիստին ապականած շուրերէն. մեհեմեդականներով զարդարուած սփիւքս մը, փարաւոնի տարագով յոյն թագաւորի մը լիթիսարի իրանը, թագաւոր-աստածունիի մը 12 թոն ծանրութեամբ փորագրուած իրանը, որ ժամանակին 12 մեթր բարձրութեամբ արձանին մաս կը կազմէր... մինչ նման գանձեր կը քաշուէին Միջերկրականի շուրերուն յատկապէս վեր, կը համբարդէին նույնիսկ ժամանակին մէջ: Ծովուն մակերեսը հասնելով՝ անոնց մեծ մասը աւելի քան 1500 տարի է ի վեր առաջին անգամ ըլլալով կը տեսներ արեւուն լոյսը:

Այնպիսի տարօրինակ հնութիւններ էին անոնք, որ քաղաքացիք կը զարմանային, թէ հնագետներ ինչու ծանձնոյթը կը քաշէին 40 թոն ծանրութեամբ կրակաշէնքի քարի գանգոյն մը փրկելու, մանաւանդ որ անիկա որեւէ զարդարանքէ զուրկ էր եւ ծածկուած՝ կանաչ մամուռի խաւով եւ ծովային խցիկներով: Այսուհանդերձ այս անհրապոյր քարի բեկորը ամենէն արտասովոր գտածոն էր: Անիկա մէկն էր նույնաման 20 ալլ զանգուածներէն, զորս մասնագետներ կը համարէին Աղեքսանդրիոյ փարոսին մնացորդները: Աղեքսանդրիոյ փարոսը պատմութեան մէջ առաջին փարոսն է եւ հին աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը (այդ հրաշալիքներէն գոյատեւած են միայն Կիզէի Մեծ Բուրգը եւ ալմուռ Թուրքիոյ մէջ գտնուող Հելլադապոլիսի կրակաշէնքը): Երկար ժամանակ տարածաշրջաններ շրջան ըրած են, թէ փարոսէն բեկորներ թաղուած են Աղեքսանդրիոյ մահահանգիստին շուրերուն մէջ: «Ի վերջոյ մատերին կրկանը դնել այդ առասպելին վրայ եւ կրկանը հպիլ փարոսին», կ'ըսէ փրկութեան աշխատանքները գլխաւորող հնագետը:

Աղեքսանդրիոյ մահահանգիստին մուտքին,

Փարոս կղզիին վրայ (փարոս կը նշանակէ «փարաւոնի կղզին») Ն.Ք. 297էն Ն.Ք. 280ի միջեւ կառուցուած այս փարոսը ունէր «հարիւր ալլ մարդու բարձրութիւն», ինչպէս վկայած է 12րդ դարու արաբ աշխարհագրագետ մը: Անիկա այդ ժամանակներու բարձրագոյն կառույցն էր աշխարհի մէջ: Բնուէր բարձրացող գլանով մը վառելանիւք կը հասցուէր փարոսին գագաթին, ուր անշէջ կրակ կը վառէր եւ Արքիմիտէսի կողմէ ձեւագծուած նուրբ ապակիէ հալելի մը արեւուն լոյսը կ'արտացոլէր դէպի ծովուն բացերը՝ մինչեւ 112 քմ. հեռավորութեամբ՝ «նաեւ կ'ըսուէր, թէ այդ հալելիին մէջ կարելի էր տեսնել մինչեւ հեռաւոր Կոստանդնուպոլիս քաղաքին անցողորդները. բանակներու շարժումները, նաւատորմներու յառաջխաղացքը, իսկ երբ նաւերը կը մօտենային, հզօր հալելի կը դարձուէր, որպէսզի արեւուն ճառագայթները արտացոլէր անոնց վրայ եւ զանոնք ալլեր ծովուն մէջ տեղը», գրած է 20րդ դարու կանուխ շրջանի պատմագիր մը:

Թեեւ երկրաշարժները եւ արշաւող ու գրաւող բանակներ քանդած են փարոսին պատերը, այսուհանդերձ անիկա դարերով յորհեւ ուղեւորներ ծառայած է դէպի Եգիպտոս ուղղուող նաւերու եւ կործանած է 1375ին, երբ երկրաշարժ մը զայն ի վերջոյ առասպելի վերածած է:

ԳԻՂՈՒԱԾՈՎ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Շուրջ երեք տարի առաջ Եգիպտոսի մը Աղեքսանդրիոյ ծոցին ստորջրեայ տարածութիւնը ժապաւենի արձանագրելու ընթացքին պատահամբ տեսած է հնադարեան աւերակներու «դաշտ» մը եւ անդրադարձած է, թէ ամբողջ տարածքը աւերումի վտանգը կը դիմագրաւէր: Քաղաքին շինարարները փարոսին գլուխը եւ վառելի մէջ 15րդ դարու ամրոց մը՝ Քալիպոլէն պաշտպանելու համար սկսած էին կառուցել շուրի հոսանքը կասեցնող թումբ մը՝ քառակուսի հսկայական քարեր գլորելով մահահանգիստին շուրերուն մէջ, հին Աղեքսանդրիոյ մնացորդներուն վրայ: Բոլորքի փոթորիկէ մը ետք Եգիպտոսի կառավարութիւնը դիմեց Աղեքսանդրիոյ Գիտութիւններու Կեդրոնի

տնօրէն Ժան-Իվ Էմփերեօրի, որպէսզի հետազօտէ ստորջրեայ տարածքը:

Էմփերեօր 30 սուզորդներ բաղկացած խմբով մը պեղեց մահահանգիստը եւ յայտնաբերեց Եգիպտական ու յունական աւելի քան 2000 հնութիւններ, որոնք կրկնապէս լեցնել տասնեակներով թանգարաններ, եւ որոնք ջրըւած էին աւազի եւ ակիքներու մէջ, ուր երկրաշարժներն ու նուաճող քաղաքակրթութիւնները նետած էին զանոնք: Ջուրի մակերեսէն 30էն եւ 75 մեթր վար, աւելի քան 20 հազար քառ. մեթրի վրայ սփռուած տարածքը համբարողու-



Սուզորդ հնագէտ մը դէմ յանդիման կու գայ 3800 տարուան սփիւքսի մը:

թիւն մը կը բանար դէպի Հին Եգիպտոսի պատմական անցեալը: Հոն թաղուած էին կրանի-թեայ կարմիր քարակոթողներ (օպելիսթ) եւ բարձրաքանդակներ, որոնք կու գային Ն.Ք. 2000ական թուականներուն իշխած փարաւոններուն ժամանակներէն: Փարոսին կրանիթեայ զանգուածային շերտերը կու գային այն ժամանակաշրջանէն, երբ Ն.Ք. 323ին Մեծն Աղեքսանդրի մահէն ետք Յուլիանոսն իշխեց Եգիպտոսի վրայ: Գտածոներուն շարքին էին խաչերով թագադրուած սիւներ՝ Յրդ եւ Գրդ դարերէն, երբ Աղեքսանդրիոյ վրայ կը տիրէր քրիստոնէական իշխանութիւնը:

Դասական աշխարհի ամենէն հռչակաւոր այս քաղաքին մնացորդները արձանագրելէ եւ շրջանը քարտեասգրելէ ետք սուզորդները ճնշը-



Աղեքսանդրիոյ փարոսէն 40 թոն ծանրութեամբ բեկոր մը կը հանուի Զայպէյի ամրոցին մահահանգիստէն:

ւած օդով լեցուած փուչիկներ զետեղեցին անմիջական փրկութեան կարիքը ունեցող 34 հնութիւններու վրայ: Ուսած փուչիկները հանդարտօրէն զանոնք բարձրացուցին դէպի շուրին մակերեսը, ուրկէ ձգանաւով (թակոյթ) քաշուեցան դէպի քարափ: Ապա բեռնատար կառքերով փոխադրուեցան Աղեքսանդրիոյ մէկ տարրալուծարանը, ուր աւելի քան չորս ամիս լսըրհուած մնացին շուրի մէջ, որպէսզի աղի բիւրեղներ չկազմուին անոնց մակերեսին՝ ճեղքեր ստեղծելով: Յառաջիկայ աշնան, իրեն փրկութիւնէն մէկ տարի ետք, հնութիւնները պիտի ցուցադրուին Քալիպոլէի ամրոցին ծովային թանգարանին մէջ:

ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՆԵՐԶԿՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՈՒՍՏ ՂԱՇԱՐ

Քալիպոլէի ամրոցը կը գտնուի Աղեքսանդրիոյ հռչակաւոր փարոսին վայրը, եւ բերեւաճան անոր կործանումին պատճառներէն մէկն է: Այժմ անիկա Աղեքսանդրիոյ ծովեզերքին հրուանդաններէն է: Սակայն երբ փարոսը տաւալին կանգուն էր, անոր տարածքը կղզի մըն էր: Հետագային այդ կղզին 1200 մեթր քարափով մը միացուած է բուն ցամաքին՝ Աղեքսանդրիոյ շերտերով զոյգ մահահանգիստ:

Յայտնաբերուած քարէ զանգուածներուն ստորջրեայ վայրը լաւապէս կը յարմարի փարոսին հակառակորդին մասին ծանօթ տեղեկութիւններուն: 14րդ դարուն պատահած երկրաշարժ մը զայն քանդած է, ապա արաբ իշխանաւորներ Միջերկրականի հանգէպ մեծ հետաքրքրութիւն չունենալով՝ Եգիպտոսի մայրաքաղաքը փոխադրած են Գահիթէ: Անոնք չեն պահած փարոսը: Եւ երբ 1349ին արաբ հռչակաւոր ուղեւոր Իպն Գարնիս Աղեքսանդրիա այցելած է, տեղեկագրած է, թէ չէ յաջողած մտնել փարոսին կառույցէն ներս: 14րդ դարու վերջերս Աղեքսանդրիոյ իշխանաւոր Մամուկ Քալիպոլէի ամրոցը կը կառուցած է նույն վայրին մէջ:

բարեխաւելու համար ծովային պաշտպանութիւնը: Այս ամրոցին շինութեան մէջ օգտագործուած են փարոսին կրանիթեայ եւ մարմարեայ բեկորներէն մասեր:

Աւելի խորնորդաւոր է մահահանգիստին շուրերուն խորքը հասած արձաններուն պարագան: Հաւանաբար անոնք ծով նետուած են ամրոցին շինութեան ընթացքին կամ բերուած են ծովափին գտնուող տահարներէն:

Մինչ հնագետներ կ'ուսումնասիրեն յայտնաբերուած հնութիւնները եւ կը փորձեն ճշդել արձաններուն ինքնութիւնը, Աղեքսանդրիոյ իշխանութիւնները համաձայնած են վերցնել արուեստական քարափը եւ ուսումնասիրել շրջանը ստորջրեայ հնագիտական զբօսայգիի մը վերածելու ծրագիրը: Այս ծրագիրին համաձայն, ապակեայ յատակով մակերեսը զբօսաշրջիկներ պիտի պատցնեն շուրին տակ թաղուած հնութիւններուն վրայով եւ սուզորդներ ուղեցոյցներու առաջնորդութեամբ պիտի թափանցեն ստորջրեայ անցեալը: «Եգիպտոս քաղաքի սփիւքսներ ունի ցամաքի վրայ: Զգալացունց պիտի ըլլար տեսնել ծովերու հետ խաղող սփիւքսներ եւ սփիւքսներու հետ խաղող ծովեր», կ'ըսէ Էմփերեօր: Անշուշտ զբօսաշրջիկներ պիտի փափաքէին երկուքը, այսինքն խաղալ ծովերուն եւ սփիւքսներուն հետ... Իսկ դիտողը պիտի ըլլար Աղեքսանդրիոյ կործանած փարոսը...:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՆԱՔԵՐԸ

Կ'ըսուի, թէ Աղեքսանդրիոյ փարոսին գաղափարը յղացած է Մեծն Աղեքսանդր: Եգիպտոսը գրաւած այս աշխարհակալը Աղեքսանդրիոյ միջերկրական եւ մահահանգիստը կառուցած է իրերէ իր կայսրութեան մայրաքաղաքը: Անոր մահէն ետք քաղաքը ինկած է Պտղեմիոս գործարարին իշխանութեան տակ, որ հիմնած է Եգիպտոսի թագաւորական վերջին հարստութիւնը:


Փարոսը կառուցուած է Պտղեմիոս Բ. թագաւորին իշխանութեան շրջանին Ն.Ք. 297էն Ն.Ք. 280ի միջեւ, ասիացի յոյնի մը՝ Սոսթրատիոսի ցուցմունքներով: Անոր բարձրութիւնը աւելի քան 125 մեթր էր: Քառակուսի գետնաշարկը կը պարունակէր 300 սենեակ, որոնք հաւանաբար կը ծառայէին իրենց վառելանիւքի ընդունարան: Վառելանիւքի փարոսին հնգանկիւն երկրորդ յարկը կը բարձրացուէր ջրիներով քաշուած գլանով կամ ջրային դուլթեամբ մը: Փարոսին գլանաձեւ երրորդ յարկին մէջ վառող կրակը հելլենական քաղաքակրթութեան խորհրդանշն էր: Ամբողջ կառույցը թագադրուած էր յունական պանթէոնի ծովուն աստուած Պոսիդոնի վիթխարի արձանով:

Շուրջ 300 տարի Եգիպտոսը կը կառավարէր Աղեքսանդրիայէն: Եգիպտացիներ, յոյներ, մակեդոնացիներ եւ հրեաներ կ'ողովէին անոր փողոցները: Մինչ Աղեքսանդրիա սկսաւ կորսնցրնել իր փառքը, փարոսը եւս սկսաւ «խամրիլ»: 700ական տարիներու սկիզբը անոր հռչակաւոր կանխեղը կործանեցաւ... կամ կողոպտուեցաւ


գանձերու սիրահար խալիֆայի մը կողմէ: Միջնադարուն անոր գետնաշարկը արդէն աւերակ էր:

Վերջերս Աղեքսանդրիոյ նաւահանգիստին ջուրերէն յայտնաբերուած 11.5 մեթր բարձրութեամբ կրանիթեայ սիւն մը մտածել կու տայ, թէ անիկա կը պատկանէր փարոսին: Նաեւ նոր դիտանկիւն մը կ'ընծանէ հնագէտներուն՝ ուսումնասիրելու համար փարոսին յունաեգիպտական ոճը, ճշգրիտ բարձրութիւնը եւ շինութեան հում նիւթերը:

«Այժմ կ'սկսուի կայանք, որ փարոսը շինուած է կրանիթի եւ կալիպտական շերտերով: Ասիկա կը հսկայապէս փոխարինէ իր մարմարէ շին-



Աղեքսանդրիոյ փարոսը հնադարեան առասպելներու միջոց էր: Եթէ ճիշդ է, ինչ որ կը պատմուի անոր մասին, ապա անիկա 40 յարկան երկնաքերի մը բարձրութիւնը ունեցած ըլլալու է...




ւած էր: Եթէ մարմար անպայման գործածուած է, ապա միայն մակտաք գաղափարով, եւ ոչ ուր, ամբողջ կառույցը պատկերով», կը բացատրէ յայտնաբերումը գլխաւորած Եգիպտական - Ֆրանսական հիմնարկին պատասխանատունը:

Հնագէտներուն ուսումնասիրութեան յաջող քայլը պիտի ըլլայ հետազօտել Քալիպոլէի ամրոցին պատերը, որոնք կը կարծուի, թէ կը պարունակեն աշխարհի առաջին վիթխարի փարոսին բեկորները:

ՓԱՐԱԻՈՆԻ ՄԸ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԸ



Հնագէտ սուզորդներ չուանցնելով կը կայան 12 թոն ծանրութեամբ փարաւոնի մը արձանը, զոր լոյս աշխարհ պիտի բերեն առնուազն 6 դարու ստորջրեայ գերեզմանէն:



Կրանիթեայ արձանը կը ճեղքէ Աղեքսանդրիոյ մահահանգիստին շուրերը: Հզօր կռուակ մը գայն կը բարձրացնէ օդը եւ կը գետնէ փոխադրանաւ մը վրայ:



Եգիպտագէտ Ժան-Փիեռ Զորթեիանի եւ հնագիտական պեղումի պատասխանատուն Ժան-Իվ Էմփերեօր առաջին ակնարկը կը նետեն քանդակին վրայ՝ նախքան անոր վերջնական փոխադրութիւնը դէպի ցամաք:



Փարաւոնին արձանը կապկապուած կը ճամբորդէ այն քաղաքին մէջէն, որուն վրայ իբրեւ աստուած իշխած էր շուրջ 2000 տարի առաջ... Տակաւին յայտնի չէ, թէ ո՞ր փարաւոնն է անիկա: Սակայն աշխարհի հզօր տէրերէն մէկը եղած ըլլալու է:



Ամենայն արագութեամբ արձանը կը վերադարձուի շուրին, սակայն այս անգամ անուշ շուրի, գայն ձերբագատելու համար դարձերու ընթացքին կուտակուած աղէն:



Մարզական



Մարզական



«ԵՒՐՈՊԱ 96»Ի ՄՐՑԱՇԱՐՔԻՆ՝

ՏԷՅՎԻԾ ՏՈՒՆ ՂՐԿՈՒՈՂ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԶԻԿԸ ԵՂԱՒ



Էտկար Տէյվիծ, որ վերադարձաւ իր հայրենիքը՝ Հոլանտա

Հոլանտայի ազգային խումբին մարզիչը՝ Կուս Հիտինքը, շաբաթավերջին պաշտօնապէս յայտարարեց, որ միջնապահ Էտկար Տէյվիծ անկարգապահութեան լանցանքով դուրս ձգուած է իր կազմէն եւ անմիջապէս տուն ղրկուած:

«Նախքան «Եւրոպա 96»ի մրցաշարքի ասարտականի մրցումները, Հոլանտայի մէջ համաձայնեցանք, որ այն մարզիկը որ որեւէ մրցումի ընթացքին հիմնական կ'ազդէր մաս չի կ'ազդէր, մարզիչին հասցէին պէտք չէ արտայայտուի. բայց Տէյվիծ չարագեց իր խոստումը».

ըսաւ Հիտինքը: Անցեալ Հինգշաբթի օր, Տէյվիծ մարզիչը ալպանց, ըսելով, որ ան կարգ մը (առանց ոեւէ մէկուն անուն յիշատակելու) մարզիկներու ականջ տուած է եւ այդ իսկ պատճառով, կարգ մը մարզիկներ իրեն պահեստի մարզիկ նկատուի կ'առնուին: Տէյվիծի ականակութիւնը կ'երթար անցեալ Հինգշաբթի օրուան Հոլանտա - Զուիցերիա մրցումին (2 - 0), երբ ինք նկատուի առնուեցաւ իրեն պահեստի մարզիկ:

«Զուիցերիոյ դէմ մրցումին նախընտրեցի Ռիչըրտ Սիթթելէն դաշտ ներկայացնել, փոխան Տէյվիծի, որ սակայն այս որոշումը կու չտուաւ, հակառակ անոր, որ ես ոչ մէկ հարց ունիմ իրեն հետ: Ես կ'ուզեմ խոսքս յաջողութիւնը եւ կը փափաքեմ այս մրցաշարքը ասարտել պատուարներ արդիւններ արձանագործելով», կ'ըսէ Հիտինք անելը: Անելով որ Տէյվիծ մրցաշարքի ասարտէն ետք պատիժ պիտի չկրէ:

9 անգամ ազգային խումբին շապիկը կրած Տէյվիծ, որ Ֆրանս Ռիքարտի պաշտօնը ստանձնած էր, յառաջիկայ եղանակին (1996 - 97) մաս պիտի կազմէ Ա. Ա. Միլանին (նախապէս՝ Այաքս):

ԺՈՐԺ ԵՒՐԻՔԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱՐԱԹԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Յառաջիկայ 3էն 7 Յուլիսին, Աթենքի (Յունաստան) մէջ տեղի պիտի ունենան քարաթէի աշխարհի ախոյեանութեան մրցումները: Լիբանանի կազմին պատասխանատուն պիտի ըլլայ Ժորժ Եւրիքեան:

Քանի մը մարզիկներ պիտի մասնակցին այս մրցումներուն: Մարզիչ Ժորժ Եւրիքեան 1968էն ի վեր կը հետեւի խումբին մարզումներուն:

«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ շԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանունը հասցեն հրատարակման թուականէն առնուպէս օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:

ՄԱՀԱՉԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահադ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ վայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԲՈՂՈՔԸ՝ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ԻՆ



Տորիմէլ Մունթեանու, որուն կողմէն խաղացաւ

Նենայու Համար: Վերջինն ալ միջամտութիւն չէր կատարած:

Մրցումէն ետք, պատկերասփիւռի կայաններ յառաջ ցուց տուին Մունթեանուի կողմէն: Ժորժ Համարի փորձած էր բողոքել, սակայն իրաւարար անտեսած էր եւ շարունակած մրցումը:

Հաւասարութիւն մը՝ 31րդ վայրկեանին, եւ մրցումին պատկերը բոլորովին տարբեր կրնար ըլլալ: Համարի Համար ցաւալին՝ յաւելեալ տեղեկութիւն ունենալու համար:

մօտեցումն էր: Ան մրցումին ընթացքին ալ սխալ մը գործեց, երբ առանց ուղղորդութիւն ընծայելու, ազդարարեց Ցանքո Յվեթանովը, ֆուլ մը կատարած ըլլալուն պատճառով, Քոնսթանթին Կալքայի ղէմ: Մինչդեռ իսկական յանցաւորը Տանիէլ Պորի-միրովն էր:

Ռումանիոյ Հրաժեշտը նաեւ նիւթական մեծ վնաս պիտի պատճառէ անոր:

Ա. Հանգրուանէն ետք ղուրս մնացող կազմերը կը ստանան 3,55 միլիոն տոլար: 3,55 միլիոն տոլար կը ստանայ միջազգային ֆուտբոլի ֆեդերացիան, իսկ 2,85 միլիոնը՝ չորսրդ ղրկները գրաւողները:

Քառորդ աւարտականէն ետք ղուրս մնացող կազմերը կը ստանան 4,28 միլիոն տոլար: Կիսաւարտականէն ետք ղուրս մնացող կազմերը կը ստանան 3,02 միլիոն տոլար: Փոխախօսեան կը ստանայ 7,84 միլիոն տոլար, իսկ ախոյեանը՝ 10,8 միլիոն տոլար:

«ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴ»ՈՒՆ ԸՈՒՏԱՓՈՅԹ ՀՐԱԺԵՇՏԸ

Եւրոֆուտբոլ չէ կրցած Համոզել «Հիւանդ մարդ»ը Թուրքիան, որ իր երկրորդ մրցումին պարտութիւն մը եւս կրելով, Հրաժեշտ առաւ մրցաշարքէն:

Թուրքերը կոչու խաղարկութիւն կը կիրարկէին, յատկապէս ֆորթուգալի ղէմ մրցումին, որ աւելի վճռական էր, տրւած ըլլալով, որ պարտութիւնը պիտի ջնջէր խումբին յոյսերը:

Անտեղի միջամտութիւններ, ֆուլեր եւ նոյնիսկ խոշտանգումներ, սակայն ոչ մէկ արդիւնք:



Փորթուգալի հերոսը՝ Ֆերնանտո Բոնո

Թուրքերը առանց տպաւորութիւն ձգելու հեռացան մրցաշարքէն:

Փորթուգալի երիտասարդ կազմը տպաւորեց իր արագ յարձակումներով:

Եւ Համոյի ֆուտբոլով: Յրտակ էր, սակայն, որ փորթուգալցիք փորձառութեան պակաս ունէին: Անոնք հերոսը Ֆերնանտո Բոնոն էր, որ ոչ միայն նշանակեց կողմ, այլ նաեւ պարտութեան պատճառով:

Եւրոպայի մէջ Թուրքիոյ մարզական յոյսերն ալ ի դերեւ ելան: 1958էն ի վեր ոչ մէկ մրցաշարքի մասնակցած Թուրքիա քառասուն տարի ետք միայն իրարմ մրցաշարքի մը մասնակցեցաւ: Արդեօք յաջորդը 2036ին պիտի ըլլայ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՏԱՆՔԱՆԻ ՅԵՇԵՆԱՐԿԱՆ ԾՐԱՎԱԶՔ

ԹՈՐՈՍԵԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Լիբանանի հեծելարշաւի տարեշրջանը սկսաւ կրտսերներու մրցումով, Պէլլուրէին Պարբուլի միջեւ համբուն վրայ (46 քմ):

Արա Թորոսեան (Հ.Մ.Ը.Մ. Պուրն Համուտ) առաջին հանդիսացաւ, սփրինթով գերազանցելով Յարութ Ժազաբլեանը (Հ.Մ.Մ.):

Մրցումին թեքիք արդիւնքներն են.

1. Արա Թորոսեան (Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ.) 1 ժ. 06' 40"
2. Յարութ Ժազաբլեան (Հ.Մ.Մ.) 1 ժ. 07' 12"
3. Մոհամետ Տարուիշ (Հ.Մ.Մ.) 1 ժ. 07' 12"
4. Եղորտը Քէյրամեան (Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ.) 1 ժ. 38' 35"
5. Շարլ Հալապի (Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի) 1 ժ. 08' 35"
6. Մուրատ Ջուլամեան (Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի) 1 ժ. 08' 35"
7. Սար Տոնապետեան (Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ.) 1 ժ. 11' 12"

The Revolutionary Japanese Air Conditioners

DYNAMIC made in Japan

I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

• 9000 - 24000 B.T.U.
HEAT PUMP SPLIT SYSTEMS

• EXCEPTIONALLY
QUIET OPERATION

• LOW POWER
CONSUMPTION,
HIGH EFFICIENCY

• FULL LCD
DISPLAY WIRELESS
REMOTE CONTROLLED

• UNBEATABLE PRICES

Exclusive Distributors:
G.Ayanian & Sons
Dora, Tel: 884914 - 870210 (jumping numbers),
Fax: 265187.
Gemayzeh, Tel: 447940 - 445096,
Fax: 582357, Cell: 03/ 627729 - 8.

ՓԱՓԷՆ ՊԻՐՄԻՆԿԶԱՄ ԿԵՐԹԱՅ

Եւրոպայի հարուստ ակումբներէն Պարսելունա եւ Փարմա իրարու հետ մրցակցութեան մէջ են. որոշելու համար թէ յառաջիկայ եղանակին (1996 - 97). պրագիլիացի երիտասարդ յառաջապահ ձիտիանի որոշեալ շապիկը պէտք է կրէ:

24 տարեկան յառաջապահը. որ Սանթոնի հետ 105 մրցումի ընթացքին 69 կողմնակաժ է. ապագայ խոստացող մարզիկ մըն է: Ածիտեաժ գոլիտով ծանօթ ալս մարզիկին համար ցարդ համաձայնութիւն չէ գոյացած անոր ակումբին՝ Սանթոնի եւ Պարսելունայի կամ Փարմայի միջեւ...



Ռամոն Վեկա

● ԱՆԳԼԻՅԱՆ Ա. զասակարգի Պիրմինկհամ Սիթիի մարզիչը Թրեւոր Ֆրենսիս յայտնեց. որ կը յուսայ մօտիկ ապագային իր շարքերուն միացնել Պայէրն Միլիտի ֆրանսացի յառաջապահը՝ Ժան - Փիեռ Փափէն:

Ֆրանսիս կ'ըսէ որ Փափէնի հետ կապի մէջ մտած է. բայց կրնայ հարցեր ունենալ անոր ակումբին հետ. որովհետեւ 32 տարեկան յառաջապահը ձեռք ձգելու համար. ան Պիրմինկհամի «գնումներուն» մէջ մրցանիշ մը պիտի հաստատէ (1.5 միլիոն տոլար):

Փափէնէն բացի. Ֆրենսիս կը փորձէ ձեռք ձգել նաեւ Տին Սոնտրըրը (Կալաթասարայէն): Ան արդէն իր կազմին միացուցած է Մանչեսթըր Եունայթեդի կեդրոնի յետապահ Սթիւ Պրուը:

● ԻՏԱԼԻԱԿԱՆ Քալիարի ակումբը անցեալ շաբաթ իր շարքերուն միացուց ղուլիցերիացի միջազգային յետապահ Ռամոն Վեկան. փոխան 4.3 միլիոն տոլարի:

25 տարեկան Վեկա. որ մաս կը կազմէ Կրասնոփըրգ Յիւրիսի. 3 տարուան համար պայմանագրութիւն մը ստորագրեց Քալիարիի հետ:

Նշենք. թէ այս պայմանագրութիւնը տեղի ունեցաւ Անգլիոյ մէջ. Հոլանտա - Զուիցերիա մրցումէն ետք. որ վերջէն վերջին խումբին պարտութեամբ (2 - 0):

ԺՈՐՏԻ ԲՐՈՒՅՑ

Իր հօր անունը այնքան հռչակ սփռած է, որ Ժորտի նախընտրած է իր շապիկին ետեւը մակնուսին փոխառել իր անունը գրել:

22 տարեկան Ժորտի Քրուլֆ կ'ուզէ հեռու մնալ իր հօր շուքէն: Ան հաճուքով կ'ապրի Եւրոպա 96ի օրերը. Բրիտանիոյ մէջ, սակայն կը խուսափի կարգ մը անտեղի հարցազրույցներէ: «Յատկապէս կը խուսափիմ այն հարցազրույցէն երբ զիս կը կաշկանդեն եւ կ'ուզեն, որ դրական կամ ժխտական պատասխանով մը մասնակցութիւնս բերեմ», կ'ըսէ Ժորտի Քրուլֆ:

Իր հօր հռչակաւոր 14 թիւին փոխարէն, ան կը կրէ թիւ 17 շապիկը: Զախ յառաջապահ Ժորտի նշանակեց Զուիցերիոյ ղէմ մրցումին առաջին կողմը: Պարսելունայէն իր հօր հրաժեշտէն ետք, հաւանական է, որ Ժորտի եւս հեռանայ Սպանիայէն: Շուկներ կան, թէ Փ.Ս.Վ. Այնտօպըրը մօտէն հետաքրքրուած է այս երիտասարդ աստղով:

HOTEL BZOMMAR

• ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՐԱՆԻ ԶՈՅԳԵՐՈՒ ԶԱՄԱՐ
• ԲՈՒԹԵՆԻ ԸՆԴԱՐԱՆԱԿ ՄԱՍԶ
• ՍԱՏՔԵՆ ԳԻՏԵՐ ԸՏԱՆԱԲԵՆՈՒ

Հեռ. 902731
902469

ՕԴԱՆԱԿԱՅԻՆ ՏՈՄՍԵՐ ԵՒ ԳՈՑՔԵՐՈՒ
ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ARA TRAVEL IATA

ARA TRAVEL, ՊՈՒՅ ԶԱՄԱՆ. ՎԱՄԱԿԱՆ ԵՆԵՔ.
Հեռ. 584340 - 583916 - 490211
ԹԵԼԵՔՍ՝ ARATRA LE 44082

ԿԱԼԸՐԻ ՊԱՂՏԱՏԵԱՆ

ԵՂԱՐԱՆ — ՀԻՐԱՍՐԱՀ —
ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԱՀ-ԿԱՐԱՍԻՆԵՐ

Պուրն Համուտի Քաղաքապետարանի մօտ.
«Արմենիա» պոլիտայ. հեռ. 260818 - 265144:

ԹՐԲԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ 28 ՔԻՒՐՏ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ

Թուրքիոյ կառավարական ուժեր 28 քիւրտ գինեալներ սպաննեցին Հարաւ-արեւելեան Թուրքիոյ մէջ արձանագրուած նոր բախումներու ընթացքին, յայտնեցին ապահովութեան պաշտօնատարներ, երէկ:

Անոնք ըսին, թէ իրաքեան սահմանին մօտ տեղի ունեցած բախումներուն ընթացքին, Քիւրտիստանի Աշխատաւորներու կուսակցութեան 16 անդամներ սպաննուած են, 4 օրուան մէջ տեղի ունեցած ճակատումներուն կուսակցութեան գոհերուն թիւը 163-ի բարձրացնելով:

ՀԱՄՊՈՒՐԿԻ ՄԵՋ ՅՈՅՑ

Գերմանիոյ Համպուրկ քաղաքին մէջ, Շարաթ օր հազարաւոր քիւրտեր ցոյց մը կատարեցին, պահանջելով վերջ տալ Հարաւ-արեւելեան Թուրքիոյ մէջ քիւրտ անջատողականներու դէմ Անգարայի վայրագութեանց արշաւին:

Ըստ ոստիկանութեան, 40 հազար հոգի մասնակցած է ցոյցին: Վայրագութիւններ չեն արձանագրուած:

(ՌԷՕԹԸՐ)

ԱՅԱՏ ՍԱՐՐԱԺ ԻՆՉՈՒՒ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ԿԸ ՄԱՅՑ

ՀԱՐՅ ԿՈՒ ՏԱՅ ԴԱՏԱՐԱՆԸ

ԿԱԶԱ, 16 (ՌԷՕԹԸՐ).- Կազայի Բարձր Ատենար Կիրակի օր բացատրութիւն պահանջեց Շասէր Արաֆատի ինքնավար իշխանութենէն, թէ ինչո՞ւ տակաւին բանտարկուած կը պահէ մարդկային իրաւանց գործիչ Այատ Սարրաժը:

Սարրաժ, որ յաճախ կը քննադատէ Արաֆատի կառավարութիւնը, ձերբակալուեցաւ անցեալ շարժումներու ընթացքին: Բանտէն մաքսանեցուած երկտողով մը, Սարրաժ կ'ըսէր, որ ոստիկաններ գինք ծծած են եւ կը փորձեն թմրեցուցիչի մաքսանեցուցութեան ամբաստանութիւն ուղղել իրեն դէմ:

Կազայի Բարձր Ատենար հինգ օր պայմանաժամ տուաւ դատարաց իրաւունքները, որպէսզի բացատրէ թէ 53 տարեկան հոգեբուժը ինչո՞ւ ձերբակալուած կը մնայ:

ՄԱՆՍՈՒՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Շասէր Արաֆատ ազատ արձակեց իսլամական «Համալ» շարժումի նապուսի գլխաւոր ղեկավարներէն Ժամալ Մանսուրը, որ լրագրող մըն է:

Մանսուր Կիրակի օր յայտարարեց, որ 80 օր առանձին բանտարկութենէ ետք, Նապուսի ոստիկանութիւնը գինք ազատ արձակած է Ուրբաթ օր: Ան ձերբակալուած էր «Համալ»-ի դէմ արշաւին ընթացքին: Մանսուր ըսաւ, որ բանտէն դուրս ելած է Արաֆատի ընկերակցութեամբ: Ան աւելցուց, որ բանտարկութեան ընթացքին որեւէ ամբաստանութիւն չէ ուղղուած իրեն դէմ:

«ԻՆՏԻՓԵՆՏԸՆՍ» ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵԻԵԼԲ ՊԻՏԻ ՄՆԱՅ

ԹՈՒՔԻՕ, 16 (ՌԷՕԹԸՐ).- Միացեալ Նահանգներ, որոնք բազմիցս մտահոգութիւն յայտնած են Արեւելեան Ասիոյ ռազմագիտական կացութեան մասին, կը ծրագրեն ձգտել մէջ Հաստատուած իրենց օդանաւակիր «Ինտիփենսիտի» ընդմիջող շրջանին մէջ պահել եւ վերջ տալ Միջին Արեւելքի ջրերուն մէջ անոր տարեկան ռազմափորձերուն:

Անոնք ըսին, թէ Ուաշինկթընի գնահատումով, Արեւելեան Ասիոյ մէջ ներկայիս կացութիւնը այնքան անկայուն է, որ անկախ չի կրնար գայն շրջանէն դուրս բերել:

Օդանաւակիրը 1991էն ի վեր Թուրքիոյ մօտ հաստատուած է:

Cool It !

With Armstrong air conditioners.

Features

- Air purifying filter.
- Automatic operation mode
- Air flow directional control
- Compressor protection
- 24 hour ON/OFF Programmable timer
- Capacity from 9000 to 24000 BTUS

ARMSTRONG

Wireless remote control

UNITEC EST. MOUCARRI CENTER - DORA - TEL: 01/586089 - 602878

AIR PURIFYING FILTER



ԵԼՅԻՆ ԵՒ ԶԻՈՒԿԱՆՈՎ...

Ընակիչները առաջին քուէարկողները եղան երկրի մը մէջ, ուր քուէարկելու իրաւունք ունեցողներուն թիւը 105 միլիոնի կը հասնէ:

Ելցին իր ընտրապայքարին առանցքը դարձուցած էր Համալիստներու վերադարձը իսլամական ազատարար, ըսելով, որ այդ պարագային, խորհրդային ընդդէմը ճնշումը եւ տրնտեսական անշարժութիւնը պիտի վերադառնան:

Ան խոստացած է իր յաղթանակէն ետք մեծ փոփոխութիւններու ենթարկել վարչապետ Վիթթոր Զեռնոմիրտինի կառավարութիւնը: Վարչապետը, իր քուէն տալէ ետք, մերժեց պատասխանել այն հարցումին, թէ ինչ պիտի պատահի իր կառավարութեան, սակայն ան ըսաւ, թէ Երկուշաբթի օր Ելցինի հետ տեսակցութիւն պիտի ունենայ:

Իր կարգին, համալիստ Զիւլկանով հաւաստեց, թէ «բոլոր քուէները մեզի պիտի ըլլան»: Ան ընդգծեց, որ «կարելի չէ, թէ քուէները պէտք է ճիշդ համարուին»:

Զիւլկանով, որուն կուսակցութիւնը պետական Տուումի մէջ մեծամասնութիւն է, կ'ըսէ, թէ Կրեմլին ղեկավարը երկիրը թշուառութեան եւ ճիւղներու վիճի մը մէջ մխրճած է:

«ՊԻ. ՊԻ. ՄԻ ԸՍԷՔ»

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 16 (ՌԷՕԹԸՐ).- Իսրայէլի վարչապետ Պեհիաբնի Նեթանիահու չի յարգուիր, յայտնեց անոր մէկ բանբեր Վիլիամ օր. Բիթա-կիցներէն պահանջելով, որ նորընտիր վարչապետին կեղծանունը չգործածեն:

Բարեկամներ, բշնամիներ եւ Բիթա-կիցներ Նեթանիահու «Պիլի» կը կոչեն: Իսրայէլացի քաղաքական անձնաւորութիւններ իրենց մանկութեան գործածուած կեղծանուններէն ուրիշ կը փոխեն:

Իսրայէլացի քաղաքական անձնաւորութիւններ իրենց մանկութեան գործածուած կեղծանուններէն ուրիշ կը փոխեն:

ԿԱՐԴ ԼՈՒՐԵՐ

ՏՈՒՊԱՅ.- ՍԼՈՒՄԱԿԱՆ Արաբիոյ մէջ երկ մարդ մը գլխատուեցաւ մարդասպանութեամբ ամբաստանուեցաւ: Այս տարի 2րդ անգամ ըլլալով է, որ երկրին մէջ գլխատուած մը Ուրբաթ օրով տեղի չունեցաւ: Այս տարի ՍԼՈՒՄԱԿԱՆ Արաբիոյ մէջ գլխատուածներու քիւրտ հաւաստիքը 49 տարեկան ֆրանսացի ոստիկան մը Ուրբաթ օր անձնասպանուեցաւ: Ան ֆրանսայի մէջ այս տարի անձնասպանութիւն գործող 35րդ ոստիկանն է:

ԱՆԳԱՐԱ.- Թուրքիոյ առաջին «կանաչ» թերթը «Փլանք» երէկ իր առաջին թիւը հրատարակեց: Անիկա կը ծրագրէ շարաքական կէս միլիոն օրինակ ծախել, կեդրոնականով կենտրոնորէ վերաբերող հարցերու վրայ:

ԼԻՈՒՆ.- 49 տարեկան ֆրանսացի ոստիկան մը Ուրբաթ օր անձնասպանուեցաւ: Ան ֆրանսայի մէջ այս տարի անձնասպանութիւն գործող 35րդ ոստիկանն է:

ԱՆԳԱՐԱ.- Թուրքիոյ

է: Ան կը մերժէ ընդունիլ, որ համալիստներու յաղթանակը ժողովրդավարութեան համար աղէտալի հետեւանք պիտի ունենայ:

Միւս թեկնածուներէն՝ հանգստեան կոչուած զօրավար Ալեքսանտր Էպէկտ յայտնեց, թէ կ'անկախ ընտրութեանց 2րդ փուլին հասնիլ եւ պարտութեան մատնել Ելցինը:

Ազատական տնտեսագէտ Կրեկորի Եաւիտիսի, զայրացած՝ այդ երեւոյթէն, թէ ընտրաքաղաքի օրերուն Ելցին իշխած է տեղեկատու ըլլալու, յայտարարեց, թէ ընտրութիւնները «հաւասար, ազատ եւ ժողովրդավար չեն»:

Նախկին խորհրդային նախագահ Սիխալէր Գորբաչով, որ ըստ նախատեսութեանց չատ փոքր թիւով քուէներ կրնայ պահանջել, յայտարարեց, թէ սկսած է կազմել ընդդիմադիր կուսակցութիւն մը:

Մայրաքաղաքի ազգայնական Վլադիմիր ժիւրնալիստ, որ Յունիս 1991-ի նախագահական ընտրութեանց պարտութեան մատնուած էր Ելցինի կողմէ, ըսաւ, թէ յաղթական դուրս ելլող ղեկավարին հետ սակարկութեան մէջ պիտի չմտնէ, կառավարութեան մէջ դիրք պահպանելու համար:

ԲՐԻՏԱՆԱՅԻՔ ԶՐԱՆՍԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԾՐԱԳԻՐ ՄԸ ԳՈՂՅԱԾ ԵՆ

ԼՈՆՏՈՆ, 16 (ՌԷՕԹԸՐ).- Բրիտանական «Սաւալ» Թերթը Կիրակի օր հարուրեց, թէ Բրիտանիոյ արտաքին գաղտնի սպասարկութիւնները գողցած են Ֆրանսայի Կեր-գաղտնի արհեստագիտական ծրագիր մը, որ մշակուած է կորիզային սուզանաւերու հետապնդումին նպատակով:

Ըստ թերթին, Ֆրանսական հակասուզանաւային պատերազմին ծրագրի մանրամասնութիւնները անցեալ տարի ձեռք ձգուած են Ֆրանսացի քաղաքային ծառայարարէն մը կողմէ, որ էմ. Այ. Յ լրտեսական կազմակերպութեան կողմէ խարուած է:

Ան տեղեկութիւններ տուած է ընկերութեան մը, որ ինքզինք ներկայացուցած է իրեն արհեստագիտական պաշտպանութեան մասին խորհուրդ տուող ընկերութիւն մը, որ իրականութեան մէջ էմ. Այ. Յին համար ծածկ մըն էր:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՋ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆ

Կիրակի առաւօտեան ժամերուն, Չեչենիոյ մայրաքաղաք Կրոզնի մէջ ռմբակոծում եւ կրակոցներ արձանագրուեցան: Շրջանին մէջ նախագահական եւ տեղական խորհրդարանական ընտրութիւնները Ուրբաթ օր սկսած էին:

Շարաթ օր, Մոսկուայի համակիր չեչէն իշխանութիւնները յայտնած էին, թէ քուէարկութեան մասնակցողներու համեմատուած է թիւերը նախատեսուածէն փոքր է: Ըմբոսներու հակաշարժիւն ենթակալ շրջաններուն մէջ քուէարկութիւն տեղի չէ ունեցած: Ըստ կառավարական աղբիւրներու, քուէարկողներուն թիւը Կիրակի օր անցած է 50 առ հարիւր:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ արտաքին գործոց նախարար Քլաուս Գրիքը Կիրակի օր ուղղակի գօրակցութեան արտաքին ելուցիւն, ըսելով, որ իր կառավարութիւնը գործիք կը կանգնի ռաբեկադրական ուժերուն:

●ՄԱՍԿՈՒՄԻՆԻ մեթոդի կայաններէն մէկը (որուն մօտակալ ընտրական կեդրոնի մը մէջ Ելցին քուէարկած էր) կարճ ժամանակով փակուեցաւ, այն տեղեկութիւններէն ետք, թէ ական մը գետեղուած է չեչեկաւորներուն մէկուն մէջ: Ռուս մէջ գտնուած:

ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՊԱՅԹՈՒՄԸ ՀՐԱՇՔՈՎ ԶՈՂ ԶԽԼԵՑ

ՄԱՆՉԵՍԹԵՐ, 16 (ՌԷՕԹԸՐ).- Բրիտանացի բարձրաստիճան ոստիկանապետ մը Կիրակի օր յայտնեց, թէ հրաշք է, որ որեւէ մահ չէ արձանագրուած Շարաթ օր, Անգլիոյ Մանչեսթր քաղաքի կեդրոնական գօտիին մէջ տեղի ունեցած ականահարումին հետեւանքով: Աւելի քան 200 հոգի վիրաւորուած են: Կ'ենթադրուի, թէ ԻՐԱ կը կանգնի գործողութեան ետին:

Փոքր բեռնակառքի մը մէջ գետեղուած ականը պայթած էր առաւօտեան ժամերուն, առեւտրական կեդրոնի մը մօտ, երբ ճամբարները խնդուած էին մարդոցով եւ մանաւանդ գրօսաշրջիկներով, որոնք քաղաքին մէջ կը գտնուէին ֆութպոլի Կիրակի օրուան խաղին ներկայ ըլլալու համար:

Պայթումէն առաջ, ոստիկանութիւնը զգուշացման 4 պատգամ ստացած է եւ ժողովուրդը չըջանէն հեռացնելու գործողութեան կը ձեռնարկէր, երբ ականը պայթեցաւ:

Բրիտանացի եւ իրանապի բարձրաստիճան պաշտօնատարները զատապարտեցին վայրագ արարքը եւ գայն որակեցին «անմարդկային»:

Ականահարումը նաեւ Հիւսիսային Իրանտալի խաղաղութեան բանակցութիւնները տագնապի մատնեց եւ ի դերեւ հանեց այն ժոյտերը, թէ Շէյխ (ԻՐԱ) քաղաքական թեւը) նոր գինադուլ մը կրնայ հռչակել, անոր առիթ տալով բանակցութեանց մասնակցելու: Անոր դեկավարը՝ ձերի էտրմզ ցաւ յայտնեց պայթումին համար, սակայն գայն չդատապարտեց:

Հիւսիսային Իրանտալի Միութենական քաղաքական անձնաւորութիւնները պահանջեցին, որ Բրիտանիոյ կառավարութիւնը բոլոր կապերը իսկ Շէյխ Ֆէյնի հետ:

ՄԱԿԻ ԶԵՆԻՉՆԵՐԸ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ ՇԵՌԱՅԱՆ ՊԱՂՏԱՏԷՆ

ՊԱՂՏԱՏ, 16 (ՌԷՕԹԸՐ).- ՄԱԿԻ գէնքի մասնագէտ քննիչները Պաղտատէն հեռացան Կիրակի օր՝ գինտուրական երեք կեդրոններու առջեւ երկու օր սպասելէ ետք: Իրաքեան իշխանութիւնները արգիլեցին քննիչներուն մուտքը այդ կեդրոններէն ներս, յայտնեց ՄԱԿԻ պատուիրակութեան պետ Նիքիթա Միտտոլիչ:

Միտտոլիչ եւ անոր ընկերացող 53 քննիչները Պաղտատէն Պահալէն ուղղուեցան: Կր նախատեսուի, որ ՄԱԿԻ գլխաւոր պատուիրակ Ռոյթ Էյլիւս Զորքաքարթի օր իրաք հասնի, լուծելու համար նորագոյն տագնապը:

Պաղտատ - ՄԱԿ նորագոյն տագնապին լուսին տակ, «Պալլի» օրաթերթը կոչ ուղղեց կառավարութեան, որ պէսգի հանրաքուէի մը դիմէ՝ երկրին տագնապները լուծելու հարցին համար: Օրաթերթը կը գրէ, որ կառավարութիւնը պէտք է վերջ տայ Իրաքի գերիշխանութեան եւ անկախութեան դէմ սպառնալիքներուն: «Պալլի» կը նշէ, որ ամբողջ երկրի մը ճակատագիրը պէտք է մնայ արտաքին գործոց եւ տեղեկատուական նախարարութիւններու հակակշիւին տակ:

ՃԱԶԻ ԱՇԽԱՐՀԸ ԿՈՐՄԱՆՅՈՒՑ ԳԻՑՃԵՐԸԼԸԸ

Արուեստի աշխարհը Շաքա օր կորսնցուց ճաղի մեծագոյն աստղերէն Էլլա Ֆիլիքսըրը:

Ան մահացած է Պեւըրլի Էլիլի իր տան մէջ, 75 տարեկանին:

Ֆիլիքսըրը կը տառապէր շաքարախտէ, որուն հետեւանքով, 1993-ին, անոր 2 սրտկանքները (ծունկերէն վար) կտրուած էին:

Ան ամբողջ 60 տարի ճաղ երաժշտութեան երգիչ աստղերէն էր (70-ական թուականներու սկիզբը, Ֆիլիքսըրը երգած է ճաղ Պալլիքի մէջ):

ՎԱՅԵԼԶՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՈՒ

DROP 8


ԱՐԱՆՅ ՀԱԳՈՒՍՏԵՐՈՒ ՎԱՃԱՌԱՏԱՆ ՄՕՏ

Զոսթիւմ՝	144.000	Լ. ոսկիէն սկսեալ
Ժաքէթ՝	112.000	Լ. ոսկիէն սկսեալ
Տաքստ՝	24.000	Լ. ոսկիէն սկսեալ
Շապիկ՝	16.000	Լ. ոսկիէն սկսեալ
Թիշըրթ՝	11.500	Լ. ոսկիէն սկսեալ

ԳԼԵՑԷՔ ՄԵՐ ՃՈՒ ՀԱՌԱՔԱՇՈՅԷՆ ՓՈԶԱԶԱՆԱԿ ԿԵՍԱԶԱՆԱԿԻ ԳԻՆՈՎ

Չալքա, Սիթէ Մուսա, Ա. Դարկ

UNILEC IS THE NEW EXCLUSIVE DISTRIBUTOR OF WHITE-WESTINGHOUSE



WHITE-WESTINGHOUSE THE BEST ELECTRICAL HOME APPLIANCES

Office and showroom : Jal El Dib - Mid Town Center Tel : 01 - 406393/4 - 444693
Telex : 44737 LE Fax : 01 - 601915 Workshop : Mar Mikhael Street Abdjian Bldg. Tel : 01 - 447040

UNILEC, EXCLUSIVE DISTRIBUTOR OF TOSHIBA SINCE 1968

ԱԶԳԱԿ

هاتف دار التحرير ٢٣٩١٨٦ - بيروت ٢٦-١١٥ الطابق ٨٨٦ - برج حمود

AZTAG, TEL. RED. 239186 (BEIRUT), 260780-583026 (BOURJ HAMMOUD), 260115 (IMP.), P.O.B. 80860, BOURJ HAMMOUD

اُزَتَاك